Ազգ
Azg
29 ՅՈՒՆԻՍ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 119(4738)
ISSN: 1829-1651

# «Ազատության նավատորմիղին» կասեցնելու հրահանգ Իսրայելի բանակին

Այդ մասին երեկ նշել է թուրքական «Սաբահ» թերթի ԱՄՆ-ում հրատարակվող անգլերեն տարբերակը: Բանակն այդ հրահանգը ստացել է Իսրայելի նախարարների խորհրդից, որը նախազգուշացրել է, որ նավատորմիղի ընթացքը դեպի Գազա անվերապահորեն կասեցնելիս պետք է ուշադիր լինել ուղեւորների կյանքի անվտանգության նկատմամբ: Տեղեկությունը հաստատել է նաեւ իսրայելական բանակի ռադիոն, իսկ վարչապետ Նաթանյահուն մոտ կանգնած անանուն մի պատասխանատու «Իսրայել հայոմ» հանդեսին հայտարարել է. «Մեր զինվորները պատրաստ են կանխել նավատորմիղի ընթացքը, ինչպես նաեւ նավերի մուտքը Գազայի նավահանգիստ»:

Հ. Չ.

# Չարտահայտվող հիասթափություն

## *Արդյունքն աննշան չեն ուզում համարել, թեեւ Կազանը դժգոհության առիթ է տվել անգամ համանախագահող երկրներին*

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կազանում հունիսի 24-ին տեղի ունեցած Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումից ակնկալիքները փաստորեն ավելի առաջ էին անցել, քան բանակցություններում համաձայնեցված իրողությունները կամ պայմանավորվածությունները հարգելու գիտակցման ձեւավորումը, ուստի որեւէ թուղթ ստորագրված չունենալու արդյունքը յուրօրինակ ձեւով արձագանքվեց, ըստ էության՝ չարձագանքվեց:

Անգամ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների պարագայում մի տեսակ խոր լռություն է, իսկ եղած կամաց բարձրաձայնումներն առավելապես ինչ-որ բան ասելու հիմքով են, քան իրական արձագանք, այսինքն՝ կարելի է ենթադրել, որ հիասթափությունը բոլոր երեքի՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի պարագայում ակնհայտ է, ու թերեւս կարող է նաեւ դժգոհություն որակվել, չնայած բանակցությունները շարունակելու կարեւորության մասին խոսող հիմնական բովանդակությամբ արձագանքները ֆիչ լավատեսության հեռանկար թողնում են:

Կազանի հանդիպման անարդյունք վիճակին է անդրադարձել ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ **Վիկտորիա Նյուլանդը** հունիսի 27-ի մամուլի ճեպազրույցում: Հարցին, թե ինչ ռեակցիա ունի Միացյալ Նահանգները կազանյան հանդիպման ձախողմանը, Նյուլանդն, ըստ պաշտոնական կայքէջի, պատասխանել է. «Ինչպես գիտեք, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները չկարողացան համաձայնել հիմնարար սկզբունքների շուրջը, երբ հանդիպեցին Կազանում: Այդուամենայնիվ, նախագահ Մեդվեդեւի հետ համատեղ հայտարարությամբ նրանք նշել են, որ իրենք առավել լավ են ընկալել որոշ հարցեր, համաձայնել են շարունակել աշխատանքը հիմնարար սկզբունքների առումով եւ կրկին հանդիպել»:

«Բայց ես կասեի, որ սա հիասթափեցնող է», ասել է Նյուլանդը:

Ֆրանսիայի արտգործնախարարությունն իր հերթին արձագանքել է բավականին հարթ եւ գրեթե ոչինչ չասող հայտարարությամբ նույն հունիսի 27-ին, նշելով Կազանում Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան նախագահական մակարդակով ընդունված հայտարարության բովանդակությունը, հավելում է. «Արդյունքն աննշան չէ: Ֆրանսիան, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի համանախագահ գործընկերների հետ ջանք չի խնայի օգնելու բոլոր կողմերին՝ շարունակելու բանակցությունները»:

Տես էջ 3

ՀԵՌՈՒՍՏԱԿԱՄՈՒՐՋ

# Բանակցությունների տրամաբանությունը ճիշտ չէ

## *Հենց այդ պատճառով Կազանում բեկում չգրանցվեց*

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Սեւծովյան-կասպյան տարածաշրջանի քաղաքական եւ սոցիալական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, մոսկվաբնակ **Վլադիմիր Զախարովը** Ռուսաստանում ապրող ադրբեջանցիներից շատերի կարծիքը փոխանցեց՝ ասելով, որ նրանք միայն խաղաղություն են ուզում եւ չեն պատրաստվում գնալ ռազմաճակատ, եթե Ղարաբաղում նոր պատերազմ սկսի իրենց երկիրը. «Այդ պատերազմը Իլհամին է պետք, ասում են նրանք», նշեց Զախարովը «Նովոստի» մամուլի ակումբում երեկ կազմակերպված Երեւան-Մոսկվա տեսակամրջի ժամանակ: Մոսկվայից, բացի Զախարովից, մասնակցում էին Կասպյան համագործակցության ինստիտուտի գլխավոր տնօրեն, քաղաքագետ, հրապարակախոս Սերգեյ Միխեեւը եւ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտի Կենտրոնական Ասիայի, Կովկասի եւ Ուրալ-Պովոլժիեի հետազոտման կենտրոնի գիտական աշխատող Անդրեյ Արեշեւը: Երեւանից մասնակցում էին «Եվրոպական ինտեգրացիա» կազմակերպության ղեկավար, քաղաքագետ Կարեն Բեքարյանն ու ԱՊՀ երկրների ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Ալեքսանդր Մարկարովը: Տեսակամրջի թեման էր՝ «ԼՂ հակամարտության շուրջը Կազանում կայացած նախագահների եռակողմ հանդիպման արդյունքները»:

Ըստ Վլադիմիր Զախարովի՝ «Չնայած ամեն ինչ մինչեւ Կազան որոշված էր թվում, սակայն այդ ամենն ընդամենը խաբուսիկ էր: Ադրբեջանի նախագահը հենց Կազանում ներկայացրեց 10 նոր առաջարկություններ: Տպավորությունն այնպիսին է, որ Կազանի հանդիպումից առաջ ինչ-որ մեկը՝ հավանաբար Արեւմուտքից, Ալիեւի հետ բանակցել է, որպեսզի վերջինս Կազանում որեւէ բան չստորագրի», նկատեց ռուս քաղաքագետը: Հիշեցնելով ռուսական մամուլում տեղ գտած տեղեկությունները, թե նախագահ Մեդվեդեւը կողմերին ասել է, որ ինքը հաջորդ նման հանդիպմանը չի մասնակցի, եթե կողմերը փաստաթուղթ չստորագրեն, Զախարովը, այդուհանդերձ, կարծիք հայտնեց, թե «առաջիկայում ես չեմ տեսնում հիմքեր, որոնց վրա կարողանամ ասել, որ ԼՂ հիմնահարցը կլուծվի»:




Հրապարակախոս **Միխեեւի** կարծիքով՝ Կազանում բեկում չգրանցվեց, քանի որ «Հայաստանի եւ Ադրբեջանի դիրքորոշումները սկզբունքորեն տարբերվում են եւ ոչ մի տեղ չեն հատվում»: **Անդրեյ Արեշեւի** համար առհասարակ «անհասկանալի էր նախքան Կազանը բարձրացված աղմուկը»: Բանախոսը հիշեցրեց, որ ԼՂ հիմնահարցը ծագել է ԽՍՀՄ-ում եւ ժառանգվել է արդեն անկախ Հայաստանին եւ Ադրբեջանին:

Տես էջ 3

# Հրապարակվեց ԱՄՆ պետքարտուղարության զեկույցը մարդկանց թրաֆիկինգի մասին



Հունիսի 27-ին ԱՄՆ պետքարտուղարությունը հրապարակել է 2010 թ. մարդկանց թրաֆիկինգի մասին զեկույցը, որով Հայաստանը հայտնվել է 2-րդ խմբում: Զեկույցում նշված է, որ Հայաստանը սկզբնաղբյուր երկիր է հարկադիր մարմնավաճառության նպատակով թրաֆիկինգի ենթարկվող կանանց եւ աղջիկների համար, սկզբնաղբյուր եւ վերջնակետ երկիր՝ կանանց եւ տղամարդկանց հարկադիր աշխատանքի համար: Առաջարկվել է Հայաստանին «առավել ակտիվ ջանքեր գործադրել հարկադիր աշխատանքի զոհերի հայտնաբերման եւ աշխատանքային թրաֆիկինգի գործերով քննությունների ու քրեական հետապնդման մասով... Նշվում է նաեւ. որ չնայած կառավարությունը 17.000 ԱՄՆ դոլարի չափով մասնակի ֆինանսավորում է հատկացրել՝ հոգալու ՀԿ-ների կողմից գործարկվող թրաֆիկինգի զոհերի ապաստարանի շինության վարձակալության ծախսերը, որտեղ հանգրվան են գտել 22 զոհեր, նախատեսված ֆինանսավորման մեկ քառորդից պակաս մասն է իրացվել 2010 թ. ընթացքում, սակայն կա դրական տեղաշարժ 2009 թ. համեմատ, երբ զոհերի աջակցության համար նախատեսված միջոցները ընդհանրապես չէին օգտագործվել:

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

# Վերանվանվեց «Իսլամական կոնֆերանս» կազմակերպությունը

**Վերանվանման այս որոշումը երեկ ընդունվեց «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության արտգործնախարարների Աստանայում հրավիրված հանդիպմանը: Անվանափոխությունը տեղի է ունեցել «կազմակերպություն» բառի «համագործակցություն» բառով փոխարինմամբ: Այսպիսով, «Իսլամական կոնֆերանս» կազմակերպությունը կոչվեց «Իսլամական համագործակցություն» կազմակերպություն: Փոփոխման է ենթարկվել նաեւ այս կառույցի զինանշանը, որը ձեւավորվել է մահիկի, երկրագնդի եւ Մեքքայում մահմեդականների համար խորհրդանշական Քաաբայի պատկերներով:**

**Հ. Չ.**

# Հորանային հրթիռակայաններ Իրանում

**Իրանցի զինվորականները հորանային արձակման հրթիռակայաններ են կառուցել բալիստիկ հրթիռների արձակման համար, հաղորդում են իրանական աղբյուրները: Այս օրերին Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսն անցկացնում է զորավարժություններ, որոնց ընթացքում կատարվում են նաեւ հրթիռների փորձարկումներ: Երկրի հեռուստատեսությունը ցուցադրել է հորանից հրթիռի արձակման տեսագրությունը:**

**Փորձագետները նշում են, որ Իրանն առաջին անգամ է ցուցադրում իր հորանային արձակման կայանքները: Թեհրանում զինվորականներն ասում են, որ հրթիռը կարելի է ավելի արագ արձակել հորանից, քան վերգետնյա կայանքից: Բացի դրանից, հորանները հնարավոր են դարձնում ավելի մեծ հեռահարության հրթիռների արձակումը:**

**Բրիգադային գեներալ Ամիր Ալի Հաջիզադեն հայտարարել է, որ Իրանի ներկայիս զորավարժությունները «խաղաղության ուղերձ են շրջակա երկրներին» եւ կոչված են ամրապնդելու իրանական զինված ուժերի մարտունակությունը:**

# Պլաստիկ վիրաբուժության թեմայով միջազգային համաժողով

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երեւանում մեկնարկել է «Անցանկալի ելքերն ու բարդությունները պլաստիկ վիրաբուժության մեջ» թեմայով համաժողովը: Երեկ Երեւանի պետական բժշկական համալսարանում տեղի ունեցավ համաժողովի բացումը, որից հետո պլաստիկ վիրաբուժության թեմայով ասուլիս կազմակերպվեց: Համաժողովի կազմակերպիչները պլաստիկ վերականգնողական ու էսթետիկ վիրաբույժների հայկական ասոցիացիան (AAPRAS) ու պետական բժշկական համալսարանն են: Անցկացվում է Պլաստիկ վիրաբույժների միջազգային համադաշնության (IPRAS), Եվրոպայի պլաստիկ վիրաբույժների համադաշնության ու էսթետիկ վիրաբույժների միջազգային ասոցիացիայի հովանու ներքո: Համաժողովին, որը տեւելու է մինչեւ հունիսի 30-ը, կմասնակցեն 20 երկրի 150 պլաստիկ վիրաբույժներ: Այս օրերին Հայաստանում կազմակերպվում են միջազգային փորձագետների դասախոսություններ, զեկուցումներ ու քննարկումներ պլաստիկ վիրաբուժության թեմայով: Այնուհետեւ համաժողովի նյութերը կամփոփվեն տպագիր ժողովածուով: Համաժողովի աշխատանքներին ծանոթանալու ու դրանք լուսաբանելու համար կազմակերպիչները հրավիրել էին նաեւ լրագրողների:

Ասուլիսի ժամանակ բժիշկ **Արմեն Հովհաննիսյանը** նախ անդրադարձավ Հայաստանում պլաստիկ վիրաբուժության անցյալին ու ներկայիս հնարավորություններին: Նրա խոսքով՝ մեր երկրում պլաստիկ վիրաբուժությունն արդեն 25 տարվա պատմություն ունի. «Սակայն թե՛ մեզանում, թե՛ ամբողջ աշխարհում սա համարվում է դեռեւս երիտասարդ մասնագիտություն»: Մարդիկ հաճախ շփվում են պլաստիկ վիրաբուժության էսթետիկ կողմին, սակայն պակաս կարեւոր չէ եւ դրա բուժական կողմը: Հայաստանում պլաստիկ վիրաբույժներն անգնահատելի դեր խաղացին հատկապես Սպիտակի երկրաշարժից ու Ղարաբաղյան պատերազմից տուժածների կյանքում: «Հետագայում մեր երկրում սկսեց զարգանալ նաեւ պլաստիկ վիրաբուժության էսթետիկ կողմը», նշեց բժիշկ Հովհաննիսյանը:

Անշուշտ, արտաքինն ավելի գեղեցիկ դարձնելու համար պլաստիկ վիրաբույժներին մարդիկ հիմա ավելի շատ են դիմում, քան նախկինում, ինչը պայմանավորված է ոչ միայն էսթետիկ ճաշակի բարձրացմամբ, այլեւ վիրաբուժության այս ճյուղի նվաճումներով: Արմեն Հովհաննիսյանը, գոհունակությամբ խոսելով հայ պլաստիկ վիրաբույժների մասնագիտական որակներից, նշեց. «Չնայած մեր մասնագետները բավականին բարձր որակավորում ունեն, սակայն դա չի նշանակում, որ մենք էլ սովորելու բան չունենք»:

Տես էջ 2

# Ընթացիկ

# Ստեփան Դեմիրճյան. Կշարունակենք պահանջել արտահերթ ընտրություններ



ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանի մեկնաբանությամբ՝ լավագույն երկխոսությունը արդար, ազատ ընտրությունների անցկացումն է:

«Ընդդիմությունը պահանջում է արտահերթ ընտրություններ, որովհետեւ նախորդ ընտրությունները կեղծվել են, վարչախումբը՝ ձախողել: Մարդիկ չեն հավատում հերթական ընտրություններին, որովհետեւ համոզված են, որ հերթական ընտրությունները հերթական կեղծիքն են լինելու, իսկ արտահերթ ընտրությունների անցկացումը հոգեբանական առումով շատ կարեւոր է հասարակության համար»: ՀԺԿ նախագահը խոստովանում է, որ Սերժ Սարգսյանը Ստրասբուրգում մերժեց արտահերթ ընտրությունների անցկացման պահանջը, սակայն միաժամանակ հույս է հայտնում, որ երկխոսությունը դեռեւս ձախողված չէ, եւ իրենք շարունակելու են պահանջել արտահերթ ընտրություններ:

Թեպետ հերթական համապետական ընտրություններին մնացել է ընդամենը 7 ամիս, սակայն, ընդդիմադիր գործչի գնահատմամբ, դեռ ժամանակ կա, որ իշխանությունը հետեւություն անի: Միաժամանակ հավելում է, թե ընդդիմությունը չի կարող երկար սպասել: Թե երբ կսպառվի ընդդիմության համբերությունը՝ Դեմիրճյանը կոնկրետ ժամանակ չի նշում: Թե ինչ կանեն, եթե իշխանությունն այդպես էլ չհամաձայնի արտահերթ ընտրություններ անցկացնել, Դեմիրճյանը կրկին չներկայացրեց ՀԱԿ-ի ծրագրերը:

Նրա մեկնաբանությամբ՝ թյուր կարծիք է ստեղծվել, որ ընդդիմությունը հիմնանպատակ է պահանջում արտահերթ ընտրություններ: «Սխալ եք կարծում, որ արտահերթ ընտրություն ենք պահանջում պահանջելու համար:

Հասարակության մեջ դժգոհությունն աճում է, եւ վերջին շրջանում հենց ՀԱԿ-ն է զսպում, որ ժողովրդական ցնցումներ չգրանցվեն», ասաց Դեմիրճյանը՝ հավելելով, որ ցնցումների ճանապարհով արտահերթ ընտրություններ չեն ցանկանում: «Իշխանությունը կգնա արտահերթ ընտրությունների, երբ հասարակական ճնշում լինի»:

Դեմիրճյանը համամիտ է, որ ՀԱԿ-ի շատ ակտիվ հատվածը դեմ է ՀԱԿ-իշխանություն երկխոսությանը, սակայն հաջորդ վայրկյանին բացառում է, որ «ազատ դեմոկրատները» ՀԱԿ-ից հեռացան երկխոսության պատճառով:

Ինչ վերաբերում է հունիսի 30-ին կայանալիք ՀԱԿ-ի հանրահավաքին՝ Դեմիրճյանը նշեց. «սպասեք բուռն իրադարձությունների»:

Հ. Հ.

# Արթուր Բաղդասարյանն ընդգծել է բարեփոխումների շարունակականության կարեւորությունը

ԵՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԻ ՆԻՍՏ



ՖՈՏՈԼՈՒՐ

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանի** եւ Եվրոմիության պատվիրակության ղեկավար դեսպան **Ռաուլ դե Լյուցեմբերգերի** համանախագահությամբ տեղի է ունեցել ԵՄ խորհրդատվական խմբի խորհրդի 6-րդ նիստը: Նիստի ընթացքում քննարկումներ են ծավալվել օրակարգում ընդգրկված մի շարք հարցերի շուրջը, այդ թվում՝ ԵՄԽԽ-ի եռամսյակային հաշվետվությունը, Կարիքների գնահատման հաշվետվությունը եւ 2011թ. հունիսից 2012թ. մայիս ամիսների համար նախատեսված աշխատանքային ծրագիրը:

Բացման խոսքում ԱԱԽ-ի քարտուղար Արթուր Բաղդասարյանը գոհունակությամբ է արձանագրել ԵՄ-ի՝ Հայաստանի վերաբերյալ 2010թ. զեկույցում տեղ գտած բազմաթիվ ուղղություններով դրական առաջընթացը եւ ընդգծել բարեփոխումների գործընթացում լայնորեն ներգրավված ԵՄ խորհրդատվական խմբի առաքելության կարեւորությունը:

Եվրոմիության պատվիրակության ղեկավար դեսպան Ռաուլ դե Լյուցեմբերգերն իր հերթին դրական է գնահատել Հայաստան-ԵՄ հարաբերությունների այս փուլում կատարված աշխատանքը եւ կարեւորել բարեփոխումների հետագա խթանման անհրաժեշտությունը:

ԵՄԽԽ-ի ղեկավար **Անթի Հարթիկայնենն** մասնակիցների քննարկմանն է ներկայացրել ԵՄԽԽ եռամսյակային հաշվետվությունը, Կարիքների գնահատման հաշվետվությունը եւ խմբի հետագա աշխատանքային ծրագիրը:

Արթուր Բաղդասարյանը նշել է, որ կառավարությանը ներկայումս մշակում է կարիքների գնահատման ամբողջական հաշվետվություն, որը պատրաստ կլինի երկու շաբաթից, եւ առաջարկել է ուսումնասիրել ու համադրել այդ երկու փաստաթղթերը՝ առավել հարուստ եւ բովանդակալից փաստաթուղթ ստանալու նպատակով:

Արթուր Բաղդասարյանը նաեւ առաջարկել է ԵՄԽԽ-ի հետագա աշխատանքային ծրագիրը դիտարկել առավել սեղմ՝ կիսամյակային ժամանակացույցով՝ հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության կողմից վերջերս Եվրոմիության ղեկավարությանն է ներկայացվել Հայաստանում ԵՄ Արեւելյան գործընկերության շրջանակներում իրականացվող բարեփոխումների խթանման ռազմավարությունը, որի նպատակն է արագացնել երեք ուղղություններով՝ քաղաքական, տնտեսական եւ արդարադատության, ազատության եւ անվտանգության ոլորտներում իրականացվող բարեփոխումների ընթացքը: Այս համատեքստում էապես կարեւոր է, որ ԵՄԽԽ-ն իր ջանքերը կենտրոնացնի վերոնշյալ ռազմավարության կենսագործման ուղղությամբ:

Նիստի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հուլիս ամսվա վերջում կազմակերպել համատեղ աշխատաժողով, որի ընթացքում կքննարկվեն կարիքների գնահատման ներդաշնակեցված հաշվետվությունը եւ բոլոր շահագրգիռ գերատեսչությունների նկատառումները ներառող ԵՄԽԽ-ի կիսամյակային աշխատանքային ծրագիրը:

# «Ժառանգություն». ՀԱԿ-ի հետ միավորման թեման փակված է

ԱԺ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար **Ստեփան Սաֆարյանի** փոխանցմամբ՝ «Ժառանգությունը» այլեւս երբեք չի կարող ՀԱԿ-ի մաս կազմել: «ՀԱԿ-ի հետ միավորման թեման մեկընդմիշտ փակված է»: Պատճառը գաղափարական տարաձայնություններն են: Սաֆարյանը չի բացառում, որ ՀԱԿ-ի հետ հնարավոր է միայն «սահմանադրական կարգը վերականգնելուն ուղղված համագործակցություն, սակայն ոչ ավելին: «ՀԱԿ-ը այդ ընթացքում կազմաքանդեց ոչ թե ավազակապետությունը, այլ կազմաքանդեց ու պառակտեց ընդդիմությունը: Դա արտահայտվեց ոչ թե ընդդիմադիր քաղաքական գործիչների չհամախմբվելով, այլ հասարակության մեջ հիասթափության առաջացմամբ»:

ՀԱԿ-իշխանություն հարաբերություններին արձագանքելով՝ Սաֆարյանն ասաց, որ իրենք որեւէ խնդիր չունեն, թե վերոնշյալ երկու ուժերն ինչ հարաբերությունների մեջ են: «Եթե պիտի մինչանց տան այնպիսի գնահատականներ, որոնք նաեւ կոծկելու են Հայաստանի իրավիճակը, մենք դա թույլ չենք տալու: Ասել, թե մարդկանց՝ քաղբանտարկյալներին հանցագործների անվան տակ բաց թողել են համաներմամբ եւ հայտարարել, որ քաղբանտարկյալների խնդիրը Հայաստանում մեկընդմիշտ լուծվել է, մենք չենք համաձայնի, որովհետեւ ոչ մի երաշխիք չկա, որ հաջորդ ընտրություններում քաղաքական գործիչ չեն ձերբակալելու», ասաց պատգամավորը:

Հիշեցնենք, որ 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ «Ժառանգություն» կուսակցությունը սատարեց ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանին, իսկ 2010թ. տեղի ունեցած ավագանու ընտրությունների ժամանակ ՀԱԿ-ն ու «Ժառանգությունը» չկարողացան լիդեր ընտրել քաղաքապետի պաշտոնի համար, եւ «Ժառանգությունը» ավագանու ընտրությանը չմասնակցեց:

Հ. Հ.

# Պլաստիկ վիրաբուժության թեմայով համաժողով

*1-ին էջից*

Հայաստանի պլաստիկ վիրաբույժների ասոցիացիան, որը ստեղծվել է 2006 թվականին, իր առջեւ խնդիր է դրել շարունակ կատարելագործելու հայ մասնագետներին: Մեր երկրի 3 հիվանդանոցում կա պլաստիկ վիրաբուժության 3 խոշոր բաժանմունք: Արմեն Հովհաննիսյանի փոխանցմամբ՝ դրանք «Քանաքեռ-Զեյթուն», «Էրեբունի» բժշկական կենտրոններում են եւ թիվ 1 համալսարանական կլինիկայում: Ինչպես բժշկության շատ ճյուղերի, պլաստիկ վիրաբուժության դեպքում էլ, ինչպես տեսնում ենք, հիմնական ներուժն ու հնարավորությունները կենտրոնացված են մայրաքաղաքում:

Անկախ ամեն ինչից, թեմային առնչվող համաժողովները, այնուամենայնիվ, կարեւոր են, քանի որ փորձի փոխանակումը նաեւ բարձրացնում է բժիշկների մասնագիտական որակները: Այս օրերին Հայաստանում են տարբեր երկրների լավագույն պլաստիկ վիրաբույժները, որոնք հայ մասնագետների հետ մասնակցում են համաժողովին: Այսինքն՝ միջոցառումը նաեւ կրթական առաքելություն ունի:

Ասուլիսի ընթացքում IPRAS-ի ներկայացուցիչներն էլ անդրադարձան IPRAS-ի հումանիտար առաքելությանը: Օրինակ՝ կանայք կանանց համար նախաձեռնության շրջանակներում IPRAS-ի կին վիրաբույժները ճանապարհորդում են տարբեր երկրներում ու օգնություն ցույց տալիս պլաստիկ վիրաբուժության կարիք ունեցող կանանց: Սա IPRAS-ի հումանիտար ծրագրերից է: Իսկ IPRAS-ի նախագահ Մարիսա Այզենման Քլայնը, խոսելով հայ պլաստիկ վիրաբույժների աշխատանքից, նշեց. «Այս ոլորտում շատ լավ աշխատանք եք կատարել, ուստի ուրիշ երկրների համար կարող եք օրինակ ծառայել»:

# Սլովենիան հետաքրքրվել է Կազանի հանդիպմամբ

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ հեռախոսազրույց է ունեցել Սլովենիայի Հանրապետության նախագահ Դանիլո Թյուրկի հետ: Ինչպես տեղեկացնում են ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, Սլովենիայի նախագահի խնդրանքով Սերժ Սարգսյանը ներկայացրել է Կազանում տեղի ունեցած հանդիպման արդյունքները: Դանիլո Թյուրկը կարծիք է հայտնել, որ միայն խաղաղ բանակցություններով է հնարավոր լուծել ԼՂ խնդիրը եւ ուժի կիրառումը եւ դրա սպառնալիքը համարել է անընդունելի:

Հ. Ա.

# Դադարեցվել են կոնսերվատորիայի ռեկտորի լիազորությունները

ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի հրամանով դադարեցվել է «Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» պետական ոչ առեւտրային կազմակերպության ռեկտոր Սերգեյ Սարաջյանի լիազորությունները ռեկտորի պաշտոնում: Հիմք է ընդունվել Սերգեյ Սարաջյանի դիմումը:

Նախարարի մեկ այլ հրամանով «Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» պետական ոչ առեւտրային կազմակերպության ռեկտորի պարտականությունների կատարումը հանձնարարվել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Շահեն Շահինյանին՝ մինչեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ռեկտորի ընտրությունն ու նշանակումը: Հիշեցնենք, որ «**Ազգ**»-ը դեռեւս անցյալ շաբաթ տեղեկացրել էր այս հնարավորության եւ պատճառների մասին:

# Հայ հասարակական գործիչն ընտրվել է ԱՊՀ երկրների երիտասարդական միության նախագահ

Մոսկվայում կայացել է ԱՊՀ երկրների երիտասարդական միության ժողովը, որում առաջադրված թեկնածուներից ղեկավար խորհրդի նախագահ է ընտրվել հայ հասարակական գործիչ, Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոնի (ՀՄԵԿ) ղեկավար Անդրանիկ Նիկողոսյանը: Վերջինս ընտրվելով կազմակերպության նախագահ, հայտարարել է, որ ԱՊՀ երկրների երիտասարդության համախմբումը կարեւոր պայման է ընդհանուր մարտահրավերներին դիմակայելու համար:

Անդրանիկ Նիկողոսյանը մասնագիտությամբ իրավաբան է: Տարբեր պաշտոններ է զբաղեցրել պետական եւ ոչ պետական կառույցներում: Ակտիվ հասարակական գործիչ է: 2010 թ. Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հրամանագրով Անդրանիկ Նիկողոսյանը պարգեւատրվել է Բարեկամության շքանշանով՝ «Ռուսաստանի հետ մշակութային կապերի, ինչպես նաեւ արտերկրում ռուսաց լեզվի եւ ռուսական մշակույթի տարածման գործում ներդրած մեծ ավանդի համար»:

Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլի հրամանագրով պարգեւատրվել է Ռուս ուղղափառ եկեղեցու Սուրբ ազնվահավատ իշխան Դանիիլ Մոսկվացու 3-րդ աստիճանի շքանշանով, ինչպես նաեւ Ռուսաստանի կառավարության պատվավոր դիպլոմով:

Մ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Ավստրիական ավիաուղիների» 10 տարին Հայաստանում

Այս տարի լրացավ «Ավստրիական ավիաուղիներ» ընկերության գործունեության 10 տարին Հայաստանում: Այս ավիաընկերությունը մրցակցում է աշխարհի հայտնի ավիափոխադրողների հետ՝ առաջարկելով եվրոպական ամենամեծ ավիացանցը, ամբողջ աշխարհում թռիչքներ կազմակերպելով 130 ուղղություններով: Միայն 46 ուղղություն սպասարկում է Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում: 2010 թվականին ունեցել է 11 մլն ուղեւոր, ընդ որում՝ ուղեւորների զգալի մասը ընկերության գլխավոր օդանավակայան՝ Վիեննա են թռչում, այնտեղից շարունակելով այլ ուղղությամբ: Մի խոսքով՝ «Ավստրիական ավիաուղիները» շուկայի առաջատար է Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում՝ թռիչքներ իրականացնելով նաեւ Միջին Արեւելք եւ Հյուսիսային Աֆրիկա: Միակ ընկերությունն է, որ Բաղդադ թռիչքներ է իրականացնում, ամենօրյա թռիչքներ ունի Տորոնտո, Նյու Յորք եւ Վաշինգտոն: Գանք վերջապես Հայաստան՝ նշելով, որ 2001-ից «Ավստրիական ավիաուղիները» չվացուցակային թռիչքներ է իրականացնում Երեւանից Վիեննա: Ներկայումս Երեւանից շաբաթական 6 թռիչք է իրականացվում Վիեննա եւ այլուր: Ունի 81 ինքնաթիռ, այդ թվում՝ Այ- 320 եւ Բոինգ 737-երը՝ նոր ներքին հարդարմամբ եւ դիզայնով: Մի խոսքով՝ «Ավստրիական ավիաուղիները» համարվում է ամենամրցակցող ընկերություններից մեկը, եւ չնայած տարածաշրջանային բավական մեծ մրցակցային միջավայրին, շատ հարմարավետ է զգում իրեն Հայաստանում:

Հայաստանյան 10-ամյա գործունեության առթիվ երեկ լրագրողներին հանդիպեցին ընկերության՝ հիմնական շուկաների գծով տնօրեն **Պատրիկ Մաք Դերմոտը** եւ ընկերության հայաստանյան գրասենյակի տնօրեն **Լուկաս Նեգեդլին**, ովքեր համառոտ ներկայացրին ընկերության 10-ամյա գործունեության արժանահիշատակ պահերն ու առաջարկները հաճախորդին:



Հանդիպմանը ներկա Հայաստանում Ավստրիայի դեսպան **Մայքլ Փոսքը** խոսեց հայ-ավստրիական կապերի, մասնավորաբար՝ նաեւ հայ-ավստրիական օդային համագործակցության մասին: Ընկերության ղեկավարներն ասում էին, թե Վիեննա ժամանող հայ ուղեւորը Վիեննայում կգտնի օդային հաղորդակցության ամենամեծ ցանցը՝ իր ուղեւորությունը շարունակելու 100 ուղղության հնարավորությամբ, այդ թվում Ասիա եւ ամերիկյան մայրցամաք: Երեւան-Վիեննա չվերթերը ամեն օր են (բացառությամբ՝ հինգշաբթի օրվա), Երեւանի ժամանակով վաղ լուսաբացին (05:25), Վիեննա-Երեւանը նույնպես ամեն օր (բացի չորեքշաբթի օրվանից) 22:20-ին, Վիեննայի ժամանակով: Ընկերության Երեւան-Վիեննա եւ հակառակ չվերթի տոմսերի գնային առաջարկը՝ միջին է, կա նաեւ առաջարկ այսպես կոչված կարմիր տոմսի տարբերակ, որը շատ էժան տոմս որոնողների համար է (199 եվրո):

Անցած տարի 35 հազար հայ ուղեւոր է օգտվել Երեւան-Վիեննա կամ հակառակ չվերթերից: Մի խոսքով՝ ընկերության առաջարկները գրավիչ են հայ ուղեւորի համար: Ընկերության ներկայացուցիչներն ասում էին, թե Վիեննայի օդանավակայանը ամենաարագ տարանցիկ օդանավակայանն է՝ ամենակարճ կապակցման ժամանակով՝ 25 րոպե, ուղեւորների եւ ուղեբեռի հեշտ եւ արագ, առանց քաշքշուկի տեղափոխմամբ մի թռիչքից մյուսը:

Խոսելով Ավստրիայի հրապուրանքների մասին, որոնք լայնորեն գովազդվում են Երեւան-Վիեննա թռիչքների ժամանակ ուղեւորներին մատուցվող ամենատարբեր բնույթի տեղեկատվության միջոցով, ընկերության ներկայացուցիչները պատմում էին կայսերական կառույցների, Մոցարտի ներկայության, վիեննական սրճարանների, հիանալի բնապատկերների, Ալպյան լճերի, հիասքանչ հարմարավետության մասին. «Ե՛վ ամռանը, ե՛ւ ձմռանը ալպյան բնություն վայելելը երբեք այսքան հեշտ չի եղել», ասում էին նրանք՝ նկատի ունենալով Վիեննա մեկնելու հարմարավետ, ամենօրյա եւ համեմատաբար մատչելի գնով ընկերության առաջարկը նաեւ հայ ուղեւորին, որը նաեւ հնարավորություն է Վիեննայից հետո երկրի ներսում գործող ավիաթռիչքներով մեկնելու Ինսբրուկ, Զալցբուրգ, Գրաց եւ այլ հայտնի հանգստավայրեր:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Հայաստանում Ավստրիայի դեսպան Մայքլ Փոսքի ճեպազրույցը

**- Կազանի եռակողմ հանդիպմանը հետեւո՞ւմ էիք եւ ի՞նչ կարծիքի եք արդյունքի մասին:**

- Իհարկե, մենք հետեւում ենք գործընթացին, որովհետեւ ուզում ենք կայունություն տարածաշրջանում: Շատ կարեւոր է, որ քաղաքական լիդերները մտապես հանդիպեն, եւ մենք հույսով ենք, որ Կազանի հանդիպումը ինչ-որ արդյունք կտա ապագայում: Մենք պետք է արդյունքները գնահատենք իրականության մեջ, այնպես, ինչպես դրանք կան: Պետք է շարունակենք առաջնորդներին մի սեղանի շուրջը բերել, որպեսզի որքան հնարավոր է շուտ գանք արդյունքի: Ավստրիան աջակցում է Մինսկի խմբին եւ նրա համանախագահներին, եւ խրախուսում է Հայաստանին ու Ադրբեջանին՝ շարունակելու քննարկումները, բանակցությունները: Եթե որեւէ նշանակալից արդյունք լինի՝ դա մեծ առաջընթաց կլինի տարածաշրջանային խաղաղության զարգացման եւ խորացման համար: Մենք Եվրոպայում դեռեւս հիշում ենք պատերազմի դժվար ժամանակները: Երբ ձեզ մոտ սով էր, եւ բոլորի վրա դա ազդում էր: Եվ մենք մտածում ենք երկու կողմերի մասին էլ:

**- Ինչպե՞ս եք գնահատում հայ-ավստրիական հարաբերությունները:**

- Իմ կարծիքով դրանք բարձր մակարդակի վրա են, սոլիդ, կարելի է ասել, բայց միաժամանակ մենք մեծ պոտենցիալ հնարավորություններ ունենք մեր հարաբերություններն է՛լ ավելի զարգացնելու: Հատ-



կապես կառանձնացնեի քաղաքական, տնտեսական, մշակութային եւ գիտական ոլորտները: Մեր հարաբերությունները շատ բարիդրացիական են, շատ անկեղծ, ու կարծում եմ, որ այդ առավելությունը պետք է օգտագործել՝ էլ ավելի զարգացնելու այն ամենը, ինչը շատ լավ հիմքի վրա է դրված: Վաղը Հայաստանում կբացվի Ավստրիայի պատվավոր հյուպատոսությունը (պատվավոր հյուպատոսը Արամ Մարությանն է լինելու):

Բիզնես կապերի առումով էլ վատ չէ՝ ձեր վարչապետը հունիսին Վիեննայում էր, որտեղ մասնակցեց համաշխարհային տնտեսական ֆորումին, որը կենտրոնացած էր Եվրոպան Սեւծովյան տարածաշրջանին եւ Կենտրոնական Ասիային ավելի մոտ բերելու խնդրի վրա: Այդ համաժողովի ընթացքում բիզնես հարաբերությունների զարգացման հեռանկարը եւս քննարկվել է:

Ավստրիական զարգացման օժանդակության գործակալությունը հիմա կմտնի հայկական շուկա: Իսկ 1988 թվականի երկրաշարժից հետո Ավստրիան Գյումրիում էր շատ ակտիվ, մանկական հիվանդանոցը շատ զարգացրեց, բավականին ժամանակակից սարքավորումներով հագեցնելով: Այս երկուսը համագործակցության լավ օրինակներ են: Հիմա ամբողջ աշխարհում հայկական սփյուռքը շատ ակտիվ է, Ավստրիայում նույնպես, եւ հատկապես Վիեննայում:

**- Տուրիզմի ոլորտում համագործակցության հեռանկարն ինչպե՞ս եք գնահատում:**

- Տարածաշրջանում Հայաստանը ամենակարեւոր երկրներից մեկն է ավստրիացի տուրիստի համար: Մի կողմից գրավիչը հարուստ մշակույթն է, մյուս կողմից՝ Հայաստանը շատ գեղեցիկ բնություն ունի՝ Սեւանա լիճն ու լեռները, երկկողմանի հետաքրքրություն կա, որովհետեւ Ավստրիան էլ հայտնի է աշխարհով մեկ որպես տուրիստական հանգստավայր: Հայաստանը կարող է տեսնել, թե ինչ է անում Ավստրիան հատկապես այն ոլորտում, որը կոչվում է սոֆթ-տուրիզմ՝ փափուկ տուրիզմ, կապված բնության հետ: Եվ կարեւոր է, որ չկրկնի այն սխալները, որ արել են մյուս երկրները: Ավելի լավ է սովորել:

Ա. Խ.

ԿԱԶԱՆՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

# Չարտահայտվող հիասթափություն

1-ին էջից

Ըստ նույն հաղորդագրության՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները մոտակա շաբաթներին կրկին կլինեն տարածաշրջանում, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղում՝ շարունակելու բանակցությունների նախապատրաստումը:

Հիասթափություն ունենալու մասին, արդեն ռուսական կողմից, տեղեկացրեց ռուսաստանյան «Կոմերսանտը»: Պարբերականը, վկայակոչելով բանակցություններին մասնակից ինչ-որ դիվանագետի, հրապարակել էր, թե Կազանում տարաձայնություններ էին առաջացել արդեն իսկ փակված համարված խնդիրների շուրջը:

Ըստ «Կոմերսանտի» Կրեմլի աղբյուրի, Ռուսաստանի նախագահն «այնքան է հիասթափված կազանյան հանդիպումից, որ պատրաստ է դադարեցնելու ԼՂ հակամարտության կարգավորմանը միտված իր միջնորդական ջանքերը», միեւնույն ժամանակ, նշելով, որ եթե մոտ ժամանակներս Հայաստանն ու Ադրբեջանը չանցնեն առկա խնդիրների լուծմանը, կարող է ավարտ արձանագրել միջնորդական առաքելությունը: Ըստ նույն աղբյուրի, Մեդվեդեւը կողմերին վերջնագիր է ներկայացրել որեւէ գագաթաժողով չկազմակերպելու այնքան ժամանակ, քանի դեռ կողմերը չեն հայտարարել հիմնարար սկզբունքների փաստաթուղթը ստորագրելու պատրաստակամության մասին:

Դեռեւս Կազանի հանդիպման հաջորդ օրը ԵԱՀԿ գործող նախագահ, Լիտվայի արտգործնախարար **Աուդրոնիուս Աժուբալիսն** արձագանքեց եռակողմ հանդիպման առնչությամբ, ընդգծելով խաղաղ կարգավորման ուղղությամբ ջանքերը շարունակելու կարեւորությունը, ավելացնելով նաեւ, որ ԵԱՀԿ-ն կշարունակի իր աջակցությունը: Աժուբալիսը հստակ ընդգծել է նաեւ զինադադարի ռեժիմի պահպանման ամրապնդման կարեւորությունն ու անհրաժեշտությունը՝ համադրելով դա վստահության մթնոլորտ ստեղծելու դերակատարությունը:

ԵԱՀԿ գործող նախագահը, եւ ոչ միայն նա, թերեւս պետք է անցնի կոնկրետ հասցեագրմանը, քանի որ այն ժամանակ, երբ Աժուբալիսը խոսում է զինադադարի ռեժիմի պահպանման մասին, Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերը իր «զուռնան» է փչում: Կազանի հանդիպումից երկու օր անց՝ հունիսի 26-ին, Ադրբեջանի «զինուժի ստեղծման 93-րդ տարվա» կապակցությամբ, ըստ ադրբեջանական ղեկավարի պաշտոնական կայքէջի, Ալիեւը հրապարակային ելույթում, չկայացած պետության ու մարդու բարդույթով, հայտարարում է, թե Ադրբեջանի բյուջեն քանի անգամ է գերազանցում Հայաստանինը, թե ադրբեջանական բանակն ինչ գերազանցություններ, ըստ իրեն, ունի հայկականի հանդեպ:

«Ես բացարձակապես վստահ եմ, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը կվերականգնվի ցանկացած ճանապարհով: Դրա համար մենք պետք է ավելի ուժեղ դառնանք», հայտարարել է Կազան նոր առաջարկների փաթեթով ներկայացած **Ալիեւը**:

Նշենք, որ կազանյան հանդիպումից հետո Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանն** իր մեկնաբանության մեջ նշել էր, որ Կազանը բեկումնային չեղավ, որովհետեւ Ադրբեջանը պատրաստ չեղավ ընդունելու եռանախագահների առաջարկած հիմնարար սկզբունքների վերջին տարբերակը:

«Ադրբեջանական կողմը մոտ մեկ տասնյակ փոփոխություններ առաջարկեց, եւ դա էր պատճառը, որ Կազանի հանդիպումը բեկումնային չեղավ»: «Եվ կարեւորն այն է, որ նախագահ Մեդվեդեւը, որը վերջին երեք տարվա ընթացքում մեծ ներդրում է ունեցել այս գործընթացում, իր պատրաստակամությունը հայտնեց շարունակելու ջանքերը՝ սկզբունքների համաձայնեցման եւ դրանց շուրջը վերջնական համաձայնություն ձեռք բերելու համար», ասել էր Նալբանդյանը:

# Բանակցությունների տրամաբանությունը ճիշտ չէ

1-ին էջից

Արդեն Երեւանի տաղավարից վերլուծաբան **Կարեն Բեքարյանը**, ընդգծելով, որ «մենք բեկում ենք փնտրում այնտեղ, որտեղ պետք չէ», ներկայացրեց մի քանի պատճառներ, թե ինչու մենք այն չտեսանք Կազանում: «Չէր կարող բեկում լինել Կազանում, քանի որ Իլհամ Ալիեւը իր երկրի ներսում՝ ներքին լսարանի առջեւ այլ է, բանակցությունների սեղանի շուրջը՝ բոլորովին այլ: Այսինքն՝ եթե Ալիեւը Կազանում ստորագրեր միջնորդների առաջարկած փաստաթուղթը, որտեղ ընդգծված է ԼՂ–ի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, ապա նա պարտավորված էր լինելու բացատրություն տալ իր ժողովրդին, որին մտապես պահում է տեղի մթնոլորտում»: Երկրորդ ու թերեւս ավելի կարեւոր պատճառը, առկա բանակցությունների ոչ ճիշտ տրամաբանությունն ու ձեւաչափն են: «Միայն Ստեփանակերտ-Բաքու ուղիղ բանակցությունները կպահովեն նշանակալի բեկում գործընթացում», շեշտեց Բեքարյանը: Վերլուծաբանը նաեւ հիշեցրեց Մինսկի խմբի համանախագահներից ֆրանսիացի Բեռնար Ֆասիեի ելույթից հատվածը, որը ունեցավ նախքան Կազանը՝ Եվրոպայի խորհրդում: Ֆասիեն հայտարարել էր, որ եթե այս անգամ էլ կողմերն իրենց գրավոր համաձայնությունը չտան առաջարկված սկզբունքներին, ապա համանախագահողները կառաջարկեն այլ տարբերակներ: Այս կապակցությամբ **Ալեքսանդր Մարկարովը** նկատեց, որ ինչպիսի փոփոխությունների էլ ենթարկվի առաջարկված սկզբունքների փաթեթը, «հիմնված է լինելու բազմիցս բարձրաձայնված երեք հիմնական սկզբունքների՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի, տարածքային ամբողջականության եւ ուժի չկիրառման վրա: Մարկարովը եւս ընդգծեց, որ բանակցությունները շատ ավելի կառուցողական կընթանան, եթե ձեւաչափը դառնա Երեւան-Ստեփանակերտ-Բաքու: Հետաքրքրական է, որ մոսկովյան տաղավարից Ալեքսանդր Զախարովը նույնպես ընդունեց այս առաջարկի իրավացիությունը. «Առանց ԼՂ-ի անհնար է խոսել ԼՂ-ում խաղաղության մասին», ընդգծեց Զախարովը:

Իսկ ի՞նչ ճանապարհ կա այժմ, երբ Կազանում մենք ունեցանք ընդամենը կողմերի հայտարարությունը, որ կողմերը պարտավորվում են շարունակել խաղաղ բանակցությունները: Ըստ Բեքարյանի՝ նախ պետք չէ հակամարտությունը մոնոպոլիզացնել որեւէ երկրի ձեռքերում, կլինի Ռուսաստանը, թե ԱՄՆ-ը, քանի որ «դա կարող է խիստ վտանգավոր լինել»: Բեքարյանը ռուս գործընկերների ուշադրությունը հրավիրեց նաեւ գործընթացում Թուրքիայի անուղղակի ներգրավվածության վրա: Ընդ որում, Անկարան, վերլուծաբանի խոսքերով, ամենեւին էլ շահագրգռված չէ ԼՂ հիմնահարցի վերջնական լուծմամբ: Իսկ բեկում կլինի, եթե Ստեփանակերտին Բաքվի հետ ուղիղ բանակցելու հնարավորություն եւ ժամանակ տան. «Թող նրանք բանակցեն թեկուզ 2-3 տարի: Այդ դեպքում Հայաստանը կհայտարարի, որ ինքը կընդունի Ստեփանակերտի ստորագրությամբ յուրաքանչյուր փաստաթուղթ, իսկ եթե կողմերն էլի հանգուցալուծման չգան, ուրեմն Երեւանը միանշանակ կճանաչի ԼՂՀ անկախությունը», եզրափակեց Բեքարյանը: Երեւանյան տաղավարից քաղաքագետ Մարկարովը եւ մոսկովյան տաղավարի հյուրերը կարծես թե ավելացնելու բան չունեցան այս մտքին:

**Հ. Գ. - Հետաքրքրական է, որ անգամ սովորական տեսակամուրջը ադրբեջանցիները փորձում են օգտագործել միայն իրենց հայտնի նպատակներով: Մոսկովյան տաղավարում հանկարծ հայտնվեց ոմն լրագրող Ահմեդով, որը թղթապանակով հարցեր էր նախապատրաստել բանախոսներին: Առաջին նախադասություններից հետո, երբ ադրբեջանցին նշեց, թե «Հայաստանը օկուպացրել է Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը», մոսկովյան տաղավարում վարողը խնդրեց՝ «Ավելի կարճ, բուն հարցը, եթե կարելի է...»:**

# Անորոշ վիճակ Երուսաղեմում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Հայերս սովորություն ունենք բնակվելու կամ մեր ազգային գլխավոր արժեքները ի պահ դնելու երկրագնդի ամենաանհանգիստ վայրերում. Կովկասն ու Մերձավոր Արեւելքը պատմականորեն խիստ անկայուն տարածաշրջաններ են եղել, որտեղ քաղաքական հակառակորդ ուժեր միշտ էլ բախվել են իրար՝ անուղղակի վնասներ պատճառելով նաեւ Հայաստանին եւ հայերին:

Ցեղասպանությանը հաջորդած տարիներին մեծ թվով վերապրողներ հանգրվանեցին միջինարեւելյան երկրներում, որոնք երկար ժամանակ անվտանգ եւ ապահով ապաստարաններ դառնալուց հետո հետզհետե սկսեցին վատթարանալ, կորցնել կայունությունը եւ սպառնալ տեղի հայկական բավական ամուր հիմքերի վրա դրված համայնքներին:

Այսպես, Եգիպտոսի, Իրաքի, Իրանի, Հորդանանի եւ Լիբանանի երբեմնի բարգավաճ հայկական համայնքները մեկը մյուսի հետեւից սկսեցին նոսրանալ՝ դառնալով իրենց նախկին վիճակի սոսկ կմախքը: Այսօր Սիրիայի հերթն է հասել, որտեղ հայկական համայնքը շարունակում էր ապրել աշխույժ կյանքով:

Վերոնշյալ բոլոր երկրներում, բացի գուցե Եգիպտոսից, հայերի ներկայությունը առնչվում է ցեղասպանության շրջանին: Միակ վայրը, որտեղ հայերը հանգրվանել են մոտ 2000 տարի առաջ, Երուսաղեմն է: Հնէաբանական պեղումները ցույց են տվել, որ հայերն այդ սուրբ երկրում ապրել են նույնիսկ քրիստոնեությունից, այսինքն՝ մեր թվարկությունից առաջ, իսկ Երուսաղեմի հայոց հոգեւոր առաջնորդ Աբրահամ պատրիարքը, 7-րդ դարում Մեքքա մեկնելով, Մուհամմեդ մարգարեից ձեռք է բերել անկախ պատրիարքության հրովարտակ, որով Երուսաղեմի հայոց պատրիարքությունն անջատել է հունականից:

Երուսաղեմը հրաշքների երկիր լինելով, կարելի է ասել, որ հայոց պատրիարքարանի գոյատեւումն այնտեղ այդ հրաշքներից մեկն է: Մեր պատմական փորձառությունը լավ հիմք է տալիս մեզ՝ վստահելու օսմանյան իշխանավորներին՝ փոքրամասնական հպատակների հանդեպ իրենց դրսեւորած վերաբերմունքի համար, որը միայն երբեմն, այն էլ իրենց շահերից ելնելով, կարող էր դրական լինել: Այդ հազվադեպ երեւույթներից մեկը Ֆաթիհ Սուլթան Մուհամմեդի պարագան է, որը 1453-ին նվաճելով Կոստանդնուպոլիսը, խրախուսում է, որ Ստամբուլում հիմնադրվի հայոց պատրիարքությունը՝ ի հակակշիռ հունականի:

Երկրորդը Երուսաղեմում հունական, լատինական եւ ռուսական հակամարտող շահերին որպես հակակշիռ օսմանյան սուլթանի պաշտպանությունն էր տեղի հայոց պատրիարքարանին, որը մինչեւ Առաջին աշխարհամարտի ավարտը գտնվում էր Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության խնամակալության եւ հսկողության ներքո:

19-րդ դարում կնքված «Ստատուս քվոյի» համաձայնագիրը Երուսաղեմի քրիստոնեական եկեղեցիներին իրավունքներ եւ առավելություններ էր շնորհել: Հայերը օգտվելով դրանից, երկար ժամանակ կարողացան պահպանել իրենց իշխանությունը քրիստոնեական թաղամասի մեկ քառորդ մասի վրա: Բայց այսօր ներքին եւ արտաքին պատճառների հետեւանքով նրանք իրենց այդ դիրքը կորցնելու վտանգի առաջ են կանգնած:

Ըստ նախագահ Քլինթոնի օրոք՝ 2000 թվին Քեմպ Դեյվիդում ձեռք բերված համաձայնության, եթե Արեւելյան Երուսաղեմը դառնա պաղեստինյան պետության մայրաքաղաքը, ապա քրիստոնեական եւ մահմեդական հատվածները պետք է մնան պաղեստինյան վերահսկողության ներքո: Ըստ նույն համաձայնության՝ հրեաներին իրավունք է վերապահվում հայկական թաղամասով անցնելու եւ աղոթելու «լացի պատի» մոտ:

Հակառակ վերջին շրջանում նախագահ Բարաք Օբամայի կատարած հայտարարություններին, պաղեստինյան անկախ պետության կազմավորումը դեռեւս քաղաքական պատրանք է մնում, մինչդեռ իսրայելական կառավարությունը շարունակում է փաստացի հաստատվել գրավյալ տարածքներում ի հաշիվ քրիստոնեական եկեղեցիների: Պաղեստինյան այդ գրավյալ տարածքները արդեն շատ երկար ժամանակ են կրում իրենց վրա գլխավոր հարվածը հրեական էքսպանսիայի՝ տարածքների ընդարձակման քաղաքականության, որը շարունակվում է ի հեճուկս միջազգային ընդվզումների կամ ՄԱԿ-ի ընդունած բանաձեւերի:

Այդ քաղաքականությունը թափանցում է նաեւ քրիստոնեական թաղամասը: Եվ ինչքան ձգձգվի իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը, տարածքների զավթումը այդ շրջաններում եւ Երուսաղեմում շարունակելու է դառնալ փաստացի իրականություն:

2005 թվին հույն պատրիարք Իրինեոսը Երուսաղեմի Ջաֆֆա Գեյթ կոչված հատվածում մի հողատարածք վաճառեց Իսրայելին՝ վրդովմունք առաջացնելով ինչպես Հունաստանի, այնպես էլ աբողջ աշխարհի հույների շրջանում: Վաճառքը նախատեսում է 198 տարով վարձակալության տալ այդ հողատարածքը: Նմանատիպ այլ գործարքները 99 տարվա համար են, բայց գործնականորեն այդ բոլոր պայմանավորվածությունները համարվում են վերջնական վաճառքներ, քանի որ ոչ ոք չի կարող կռահել, թե ինչ կպատահի այդ ժամկետների ավարտին:

Հայերն էլ են զոհ դարձել նման կասկածելի գործարքների, եւ միակ բացատրությունը, որ պատրիարքարանը կարողանում է տալ, այն է, թե իրենք «խաբված են եղել»:

Հայերի կալվածքներն ու եկեղեցիները գտնվում են գլխավոր վայրերում եւ լավ «թիրախ» են հետագա գործարքների համար:

Պատմության այս վճռորոշ ժամանակաշրջանում, երբ հայերի գոյության խնդիրը սուրբ քաղաքում վտանգված է, պատրիարքությունն ու միաբանությունը գտնվում են շփոթ կացության մեջ: Ամբողջ համայնքի ուշադրությունը բեւեռված է 94-ամյա պատրիարք Թորգոմ Մանուկյանի վատառողջության վրա:

Իր ծաղկուն շրջանում Երուսաղեմի հայկական բնակչությունը 25 հազար էր հաշվվում: Այսօր նվազել է եւ դարձել հազարից էլ պակաս: Մեծ թվով հայերի ներկայությունը կնպաստեր բարոյական աջակցություն ցուցաբերելուն պատրիարքարանին, որն իր գործերը տնօրինում է առանց արտաքին միջամտության, միաբանությանը ստատուս քվոյով տրամադրված իշխանության շնորհիվ:

Հույները, ռուսներն ու Վատիկանը միշտ էլ միջամտել եւ թիկունք են կանգնել իրենց համապատասխան պատրիարքարաններին Երուսաղեմում: Մեր դեպքում, միայն Սբ Հակոբյանց միաբանությանն է իրավունք վերապահվում (ստատուս քվոյով) կատարելու նման քայլեր: Այդ իրավասությունն այնքան մեծ է, որ միաբանության վերջին կոնկլավին (փակ ժողովին) Էջմիածնի բարձրաստիճան հոգեւորականներին չթույլատրվեց մասնակցել, եւ գերագույն պատրիարք Գարեգին Բ կաթողիկոսի ուղերձը հանձնվեց միաբանությանը՝ ընթերցվելու համար:

Բացի իսրայելա-պաղեստինյան հակամարտությունից, որն, ինչ խոսք, վնասում է հայկական շահերին, կուլիսներում գոյություն ունի (արդեն ինչքան ժամանակ է) նաեւ էջմիածնական եւ անթիլիասական խմբավորումների հակամարտությունը, որն առավել ուժգնանում է հոգեւորականների անձնական փառասիրությունների հետեւանքով:

Մարտի 15-ը նշանակված էր որպես վերջնաժամկետ պատրիարքի տեղապահ ընտրելու, բայց այդ թվականը եկավ-անցավ, եւ ոչ մի բան չձեռնարկվեց, հակառակ այն փաստին, որ պատրիարքի առողջությունը գնալով ավելի է վատթարանում: Այս դանդաղկոտությունը կամ ձգձգումը վտանգավոր եւ աղետալի հետեւանքներ կարող է ունենալ:

Պատրիարքարանի ներքին կանոնադրությունը պետք է փոփոխության ենթարկվեր, որպեսզի հնարավոր լիներ ընտրել տեղապահ, բայց ցարդ ոչ մի հաղորդագրություն չի հրապարակվել այդ առնչությամբ:

Դարերի ընթացքում աշխարհի տարբեր անկյուններում ծվարած հայերն իրենց սիրահոժար նվիրատվություններով նպաստել են ստեղծելու Երուսաղեմի ներկայիս հարստությունը: Բայց 1914-ից ի վեր, երբ Օրմանյան պատրիարքն Ստամբուլից ուղեւորվել էր Երուսաղեմ՝ ստուգելու պատրիարքարանի կանոնախախտումները, ոչ մի հաշվետվություն ցարդ չի ներկայացվել Սբ Հակոբյանց միաբանության կողմից:

Քրիստոնեական եկեղեցիները հարկելու իսրայելական կառավարության վերջերս որդեգրած քաղաքականությունը էլ ավելի է բարդացնելու հայոց պատրիարքարանի շուրջն ստեղծված իրավիճակը, սակայն այս վտանգը նույնպես չի սթափեցնում միաբանությանը՝ կարգի բերելու սեփական տունը:

Տեղապահության հնարավոր թեկնածուների միջեւ մրցակցությունը շարունակվում է: Այն բարձրաստիճան հոգեւորականները, որոնք կարող են ապահովել պատրիարքարանի կայունությունը, խուսափում են պատասխանատվությունից, մինչդեռ բոլոր մյուսները, գոտեպնդված ամենատարբեր հավակնություններով, իրենց ձեռնհաս են համարում ստանձնելու այդ պաշտոնը՝ հետագայում պատրիարք դառնալու ակնկալիքներով:

Անձնական եւ խմբակցային մրցակցությունը գերիշխում է, մինչ իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը սպառնում է մեր կենսական շահերին եւ հետապնդում տիրանալու մեր դարեր շարունակ խնամքով պահպանված կալվածքներին:

Շտապողականության ոչ մի նշույլ: Ամեն ինչ քողարկված է:

Երուսաղեմում հայոց պատրիարքարանը անորոշ վիճակում է:

**Թարգմ. Հ. Ծ.**

ԱՐՁԱԳԱՆՔ

# Մի խեղ հաղորդման առիթով



Օրերս մեկ անգամ եւս համոզվեցի, որ ինչպես շատերը, ես էլ ճիշտ եմ վարվում՝ Հայաստանի հեռուստահաղորդումները չդիտելով՝ ցածր մակարդակի, լեզվի խեղման, գռեհկությունների եւ այլ պատճառներով:

Դառնանք առաջին ալիքի հաղորդումներից մեկին՝ «Հայոց հարցը» վերտառությունը կրող հաղորդաշարին:

Այս անգամ այն նվիրված էր Գալուստ Գյուլբենկյանին, եւ մինչեւ հաղորդման ավարտը չհասկացվեց, թե ի՞նչ էին ուզում Գալուստ Գյուլբենկյանից, եւ որ կարեւորն է՝ ի՞նչ աղերս կար Հայոց հարցի եւ Գյուլբենկյան Գալուստի միջեւ:

Հրավիրված էին մասնագետներ, թե ինչ սկզբունքով՝ չհասկացվեց, բայց հասկացվեց, որ հրավիրվածներից միայն մեկը գիտե, թե ինչո՞ւ է հրավիրվել, ո՞ւր է եկել եւ ի՞նչ է ասելու:

Այդ մեկը «հայտնի հրապարակախոս» Կարինե Հակոբյանն էր, որն ամեն ջանք գործի դրեց եւ ապացուցեց, թե Գալուստ Գյուլբենկյանը բարեգործ չէ: Ինչո՞ւ: Քանի որ նա մեծամիտ ու ինքնահավան մարդ էր եւ նույնիսկ իր կարողությունը զավակներին չթողեց, որպեսզի միայն ի՛ր անունը հավերժանա, իսկ այն, ինչ-որ այժմ կա եւ շարունակվում է, դա բարեգործություն չէ: Մեծամիտ, ինքնահավան, նարցիս մարդը կարո՞ղ է բարեգործ լինել, ըստ հրապարակախոսի, ո՛չ:

Շարունակեց: Ի՞նչ արեց Գյուլբենկյանը 1915-ին եւ ի՞նչ արեց Սարդարապատի ճակատամարտի ժամանակ:

Վստահ եմ, թե Գյուլբենկյանի կենսագիրները գիտեն, թե նա ուր էր եւ ինչ էր անում վերը նշված տարիներին, սակայն, ըստ մեծ «հրապարակախոսի», Գյուլբենկյանը փախավ: Ո՞ւր փախավ, ումի՞ց փախավ, ինչո՞ւ փախավ, հարցը բաց մնաց, եթե չհաշվենք Գ. Գյուլբենկյան հիմնարկության Հայաստանի ներկայացուցչի այն դիտողությունն ու հարցը, թե բա ի՞նչ աներ: Որով եւ կարծես թե հաստատեց Գյուլբենկյանի «փախուստը»: Այստեղ հեռուստադիտողը մնում է շվարած: Ի՞նչ են ուզում Գյուլբենկյանից, ուզում են ասել, որ նա իր ազգին վճռական պահին տեր չկանգնեց, բայց դա ի՞նչ կապ ունի բարեգործ լինել կամ չլինելու հետ:

Հայրենասիրությունը այլ բան է, բարեգործությունն՝ այլ: Կռված կամ զոհված ազատամարտիկը հայրենասեր է, հերոս, բայց ոչ բարեգործ, իսկ Յակոբսոնը նույնիսկ հայ չէ, բայց բարեգործության չափանիշ է: Ազգ եւ բարեգործություն հականիշ հասկացություններ չեն: Ինչ վերաբերում է Գյուլբենկյանի՝ իր ազգին նվիրված լինելուն, դրա ապացույցներն անթիվ ու անհամար են, բայց քանի որ մեր հրապարակախոսը ազգ եւ հայրենիք հասկացությունների մեջ խճճվել էր, հեռուստադիտողին թողեց անորոշության մեջ: Հեռուստադիտողը ուզում է իմանալ Բուրկինա-Ֆասոյում, Չիտայում կամ մի այլ երկրում ծնված հայը հայրենակի՞ց է, թե՞ ազգակից:

Նա՝ հրապարակախոսը, ասում է, թե Գյուլբենկյանն աշխատել է Թուրքիայում եւ հարստացրել է Թուրքիան եւ ոչ իր երկիրը: Հրապարակախոսը մոռանում է, որ Թուրքիան էր Գյուլբենկյանի ծննդավայրն ու երկիրը: Ի՞նչ աներ այդ խեղճ Գալուստը, կարո՞ղ էր նա ծնողներին (իր ծնվելուց առաջ) ամուսնական առագաստ մտցնել Նորվեգիայում կամ Ռուսական կայսրության մեջ գտնվող Հայաստանում: Եվ փրկվեր Թուրքիայի քաղաքացի լինելու «ամոթից»:

Նորից դառնանք նյութին. ինչ կապ կա Թուրքիայում աշխատելու ու նրան հարստացնելու եւ բարեգործ լինել կամ չլինելու միջեւ, կամ ոչ պակաս՝ ո՞ւր է այստեղ հայոց հարցը:

Ցավոք, այն միտումը, որ զուգահեռներ են փնտրվում հրեաների եւ հայերի ճակատագրի մեջ, այստեղ էլ ակնհայտ էր, քանի որ հրապարակախոսը եղել էր Հրեաստանում եւ համոզվել, որ հրեաները, հատկապես հարուստները, իրենց տուրքն են տալիս իրենց երկրին: Նրանք վերադարձնում են իրենց պարտքը եւ ոչ թե տվածը բարեգործություն համարում: Եթե նույնիսկ համաձայնենք այս չհամաձայնվելիք դատողությանը, ապա ինչ աներ Գյուլբենկյանը, ո՞ւմ վերադարձներ իր «պարտքը», իր երկրի՞ն, իսկ ո՞րն էր նրա երկիրը... եթե Գյուլբենկյանի երկիրը 1918 թվականին ստեղծված Հայաստանն էր, ապա միայն այն փաստը, որ Գյուլբենկյանը Ավետիս Ահարոնյանից անձամբ ստացած անձնագրով էր ճամփորդում, արդեն նրա, որպես հայ կերպարի, մասին ինչ-որ բան ասում է: Իսկ Սովետական Հայաստանին նրա նվիրումը դեմ առավ իր անձը վարկաբեկող Հայաստանի ղեկավար Ա. Խանջյանի անհեռատես եւ անտակտ նամակին: (*)

Մանրամասները շատ են, չանդրադառնանք, բայց ասենք, որ ոչ միայն իր ժողովրդին նյութապես օգնող Գ. Գյուլբենկյան հիմնարկությանը ներկայացնել այնպես, որ հանրությունը 56 տոկոսով Գյուլբենկյանին համարի բացասական կերպար, ոչ միայն ամոթալի է, այլեւ ազգադավ:

Թե ինչո՞ւ մյուս մասնակիցները չասացին, որ միայն վերջին տարիներին Գյուլբենկյան հիմնարկությունը Հայաստանին նվիրել է 1 միլիոն դոլար արժողությամբ գունավոր տպարան, թե ինչո՞ւ չասվեց, որ այժմ բարեհաջող գործող գենետիկայի լաբորատորիան նվերն է Գյուլբենկյան հիմնարկության, որ «կոլխիցին» (երեւանյան հիվանդության) դեղամիջոցը Հայաստանում արտադրվում է Գյուլբենկյանի շնորհիվ, որ 1992-ից մեր երկիրը խոր շրջափակման մեջ էր, եւ աշխարհի ողջ գիտական ինֆորմացիան Հայաստան էր հասնում միայն Գյուլբենկյան հիմնարկության շնորհիվ, որ Ակադեմիայի ջեռուցման համակարգը Գյուլբենկյանի գործն է, որ 50-ից ավելի համակարգիչ է մտել Հայաստան դեռ 25-30 տարի առաջ:

Հիշել միայն կրթաթոշակները եւ մանկատների օգնությունը կամ նշել Հայաստանում լույս ընծայված գրքերի 120-ը՝ մոռանալով Սփյուռքում հրատարակված 400-ը, արդար չէ:

«Հայոց հարցի» մեծարգո մասնակիցներ, մի կարծեք, թե հեռուստադիտողը չէր սպասում հրապարակախոսի այն հարցի պատասխանին, թե ինչո՞ւ Պորտուգալիային հասավ «գայլի բաժին», իսկ Հայաստանին՝ մի չնչին, այդ հարցի պատասխանը բոլորը լռելյայն գիտեն եւ հարցին հարցով են ուզում պատասխանել: Իսկ ո՞ւր կամ ո՞ւմ գնաց «Լինսի» հիմնադրամի «գայլի բաժին»-ը...

Այնպես որ, այս հարցի չպատասխանն էլ խոսում է այն մասին, որ Գալուստ Գյուլբենկյանը ավելի խելոք մարդ է եղել, ավելի շրջահայաց ու հեռատես, քան կարծում են մեր հրապարակախոսը եւ «Հայոց հարցի» խիստ մակերեսային հաղորդաշար-շոուի հեղինակը:

**ՌՈՒԲԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

(*) «**Ազգ**»ը ցանկացողներին կարող է տրամադրել Կարլեն Դալլաքյանի «ՀԲԸ Միության նախագահ Գ. Կյուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ» գրքից օրինակներ՝ «ի պէտս զարգացելոց» սկզբունքով:

# Հայատյացությունը չի սահմանափակվում թուրք ազգայնամոլների շրջանակներով

### *Դրանով տառապում են նաեւ Թուրքիայից ԱՄՆ տեղափոխված վարձու ոչ թուրք գրչակները*

**«Ազգի» նախորդ համարում անդրադարձել էինք «Թուրք վրիժառուների բրիգադին»՝ ցույց տալու համար թուրքական իրականության մեջ արմատակալած հայատյացությունն, ու ազգայնական լինելով հանդերձ, դրսից ուղղորդվող այս կառույցի թուրքահայությանը ներկայացված սպառնալից վերջնագիրը:**

**Հայատյացության շրջանակները, ինչպես երեւում է, չեն սահմանափակվում թուրքական իրականությամբ, ոչ էլ թուրք ազգայնամոլ կառույցներով, որքան էլ վերջիններս դրսից ղեկավարվեն: Հայատյացներ կան նաեւ դրսում, մանավանդ ԱՄՆ-ում, ընդ որում՝ ոչ թուրք: Խոսքը Օյա Բաինի մասին է: Օյա անունը հուշում է, որ նա կին է, իսկ Բաին ազգանունը՝ սաբաթայականության, այսինքն՝ առերեւույթ իսլամ ընդունած հրեական ծագման մասին:**

**Ըստ երեւույթին այս խանումը Թուրքիայից տեղափոխվել է ԱՄՆ, քաղաքացիություն է ստացել, սակայն հայատյացությունից չի հրաժարվել: Օյա Բաինը թուրք չէ, բայց յուրացրել է թուրքական ազգայնամոլության բոլոր արատները: Կին է, բայց կանացի քնքշության փոխարեն ունի վարձու գրչակի հատկանիշներ: Ըստ երեւույթին սրան բարձր են վարձատրում:**

**Համենայն դեպս Նյու Յորքի Turkishny.com կայքէջում հունիսի 27-ին հրապարակված Բաինի հոդվածը ամբողջացնում է ինչպես թուրքերի, այնպես էլ թուրքական ծառայության անցնելու պատճառով հայատյացությամբ տառապող եւ սիրահոժար հակահայ գործունեություն ծավալող ոչ թուրքերի մասին մեր պատկերացումները: Կրճատումներով ներկայացնում ենք Բաինի հոդվածը.**

«Մինչ մոտենում են ամառային արձակուրդները, ԱՄՆ Կոնգրեսի հայկական եւ հունական ծագում ունեցող ներկայացուցիչներն ու մեզ քաջ հայտնի հակաթուրք կոնգրեսականները Թուրքիայի դեմ ուղղված 4 անփառունակ օրինագծի անցկացման ջանքեր են գործադրում: Հայկական թիվ 304 օրինագիծը բաղկացած է 30 կետերից: Ունի 69 աջակցող, թիվ 306-ը առնչվում է Թուրքիայի տարածքում գտնվող եկեղեցիներին ու քրիստոնյաներին, որի աջակիցների թիվը 32 է, իսկ թիվ 180-ը՝ հույն ուղղափառ պատրիարքին է վերաբերում: Դրա նպատակը Ստամբուլի հունական պատրիարքարանը տիեզերական դարձնելու միջոցով այս աթոռին Թուրքիայում գործող օրենքներից վեր գործունեություն ապահովելն է: Աջակցողներից 63-ը դեմոկրատական են, իսկ 17-ը՝ հանրապետական: Դեմոկրատները իզուր տանուլ չեն տվել 2010-ի ընտրություններում: Ամերիկյան ժողովուրդը զզվել է նման զազրակություններից: Այսինքն՝ օրինագծերը ամոթանքի աղբյուր են եւ միանգամայն անտեղի: Ըստ երեւույթին Կոնգրեսում ոմանց որոշ օրգանները մեծ են ուղեղից... Ո՞ւր են գնում մեր վճարած հարկերը: Ինչո՞ւ են մեր փողերը վատնում այս կարգի տխմարությունների համար:

Եկեք մտածենք, թե ինչու հունական եւ հայկական սփյուռքը հենց այս ամիսներին է ակտիվանում: Հուլիսը Թուրքիայի համար նշանավորվում է պատմական երկու կարեւոր իրադարձություններով: 1974-ի հուլիսի 20-ին Կիպրոսում Թուրքիան վերջ տվեց հույների ահաբեկչությանն ու բռնություններին: 1923-ի հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագրով Թուրքիան ի չիք դարձրեց Եվրոպայի ընչաքաղց, իսկ Ամերիկայի (Վիլսոնի) նեղմիտ ծրագրերը:

Թուրքական այս հաղթանակները դեռեւս Եվրոպայում ու Ամերիկայում չեն մարսվել: Վերջին երկու տարիներին հուլիսի 20-ին մի խումբ թշվառ հույներ սկսել են հայտնվել մեր դեսպանատան առջեւ:

Մյուս պատճառն էլ Կոնգրեսի ուշադրությունը Եվրոպայի «հիվանդ մարդը» հանդիսացող Հունաստանից եւ Կովկասի սնանկացած պետության՝ Հայաստանից շեղելն է:

Մոտենում է 2015-ը: Հայերն անընդհատ կորուստներ են կրում: Լավ վիճակում չեն նաեւ հույները: Ֆինանսական ասպարեզում հույների շփացածությունը սկսել է ազդել Եվրոպայի եւ ԱՄՆ-ի գրպանների պարունակության վրա: Հիմա արդեն հույների նկատմամբ սերը վերածվել է հունական ալերգիայի:

Եթե դուք հայացք գցեք թիվ 304 օրինագծին, ապա պարունակած կեղծիքներից, զրպարտանքներից եւ ստերից կմնաք շփոթված: Տարեց տարի աճում է մահացածների թիվը եւ դա (նկատի ունի Հայոց ցեղասպանությունը), չգիտես ինչու, ներառում է նաեւ հանրապետական շրջանը:

Իրավիճակին ուշիուշով հետեւում է Ամերիկայի թուրքական կազմակերպությունների համագումարը: Ի՞նչ պետք է անել:

1. Պետք է մտնել կայքէջ, որտեղ կա պատրաստի նամակ, մնում է դա ուղարկել ձեր նահանգից Ներկայացուցիչների պալատում ընտրված կոնգրեսականներին եւ երկու սենատորներին: Դա ընդամենը 1 րոպե է տեւում:
2. Կայքէջ մտնել եւ հնարավոր միջոցներով մեծ կամ փոքր չափի օգնություն տրամադրել:
3. Ոչինչ չանել եւ հաշտվել վիրավորանքների, զրպարտանքների ու ստերի հետ:

Բարի արձակուրդ...»

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# «Թողեք ապրենք խաղաղության մեջ», պահանջում են սիրիացիները




Սիրիայի վերջին շրջանի իրադարձությունների առնչությամբ խմբագրությունը Հայաստանում Սիրիայի դեսպանատնից ստացել է գունավոր տպագրությամբ «Սիրիա: Կարեկցանքն ու խաղաղությունը ընդդեմ ահաբեկչության» գրքույկ-ալբոմը, որտեղ անգլերեն եւ արաբերեն հակիրճ գրություններն ու նկարների մակագրությունները փորձում են երեւան հանել Իսրայելի սանձազերծած սիոնիստական դավադրության նպատակները:

«Ահաբեկչությունը հայրենիք եւ կրոն չի ճանաչում, եւ Սիրիան տառապել է դրանից 70-ականների վերջերին եւ 80-ականների սկզբներին: ... Մեր օրերում այդ ոճրագործական խմբավորումներն իրենց քայքայիչ գործողությունները շարունակում են ծավալել, այս անգամ, սակայն, օգտագործելով զանգվածային լրատվամիջոցները եւ տեխնիկական ու ռազմական նորագույն միջոցները», ասված է ներածականում, որտեղ Իսրայելի նպատակների թվում նշված են Սիրիայի ներսում ատելություն սերմանելը, քաոսային վիճակի ստեղծումը, ազգային միասնականության թուլացումը եւ այլն:

«Լրատվական պատերազմն ընդդեմ Սիրիայի» խորագրով էջում ցույց է տրված, թե ինչպես են հրեաները ներթափանցում արաբական եւ եվրոպական հայտնի «Ալ Ջազիրա», «Ալ Արաբիա», BBC եւ France 24 լրատվամիջոցները եւ դրանց միջոցով թելադրում իրենց կամքը:

Մյուս էջերում ներկայացված են ձերբակալված ահաբեկիչների եւ նրանցից առգրավված զինամթերքի, զոհված սիրիացի ոստիկանների եւ անվտանգության մարմինների աշխատակիցների, ինչպես նաեւ վանդալիզմի դրսեւորումների լուսանկարները:

Գրքույկ-ալբոմը եզրափակվում է «Ցանկանում ենք ապրել խաղաղության մեջ» նախադասությամբ:

Գրքույկը ուղեկցվում է նաեւ փաստագրական մի տեսահոլովակով (DVD), որտեղ սիրիական բանակի քաղաքական վարչությունը ներկայացնում է ահաբեկիչ խմբավորումների իրագործած վայրագությունները՝ մասնավոր եւ հանրային սեփականությունների հրկիզում, դիակների այլանդակում, հիվանդանոցների անձնակազմի սպանություններ, շտապ օգնության մեքենաների աշխատանքների խոչընդոտում եւ այլն: Միաժամանակ ցույց են տրված այդ խմբավորումներից առգրավված զենքերը, նրանց անդամակցած ահաբեկիչների խոստովանությունները, նախագահ Ասադի պատրաստակամությունը՝ բարեփոխումներ կատարելու, եւ նրան աջակցող ժողովրդական զանգվածների պահանջը՝ բանակի միջամտությամբ երկրում կարգ ու կանոն հաստատելու վերաբերյալ: «Թողեք ապրենք խաղաղության մեջ», ասում են նրանք:

Հ. Ծ.

ԼԻԲԻԱ

# Արեւմուտքը ողջունում է Քադդաֆիին ձերբակալելու ՄՔԴ-ի վճիռը, Մոսկվան՝ ոչ



**Միջազգային քրեական դատարանը (ՄՔԴ) կարգադրել է ձերբակալել Լիբիայի առաջնորդ Մուամմար Քադդաֆիին: Արեւմուտքը ոգեւորությամբ է արձագանքել դատավճռին, մինչդեռ Ռուսաստանը եւ որոշ այլ երկրներ այլ տեսակետ ունեն:**

**Հաագայում գործող դատարանի վճռի կապակցությամբ Սպիտակ տան մամլո քարտուղար Ջեյ Քարնին հայտարարել է. «Սա եւս մեկ դրսեւորում է, որ Մուամմար Քադդաֆին կորցրել է օրինականությունը»: Ավելի վաղ համանման հայտարարությամբ հանդես էր եկել Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ուիլյամ Հեյգը:**

**ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը հայտարարել է, որ ՄՔԴ-ի կարգադրությունը լրացուցիչ փաստարկ կդառնա Հյուսիսատլանտյան դաշինքի ռազմարշավի շարունակման համար: Դատավճիռը պաշտպանել են նաեւ Ֆրանսիայի եւ Իտալիայի կառավարությունները:**

**ՄՔԴ-ում Քադդաֆիին մեղադրում են Լիբիայում բողոքի զանգվածային ելույթների ճնշման ժամանակ հակամարդկային հանցանքներ գործելու մեջ: Դատավճիռը կայացրել է երեք դատավորներից կազմված կոլեգիան ՄՔԴ-ի դատախազ Լուիս Մորենո-Օկամպոյի պահանջով, որը Հաագայի դատարանին էր դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի խնդրանքով:**

**BBC-ն հաղորդում է, որ ցուցարարների կանխամտածված սպանության համանման մեղադրանքներ են ներկայացվել նաեւ Քադդաֆիի որդի Սեյֆ ալ Իսլամին եւ Լիբիայի հետախուզական ծառայության ղեկավար Աբդուլլահ Սենուսիին: Երեքի նկատմամբ էլ հայտարարված է միջազգային հետախուզում:**

**Քադդաֆիի վարչակարգի ներկայացուցիչները հայտարարել են, որ իրենք չեն ճանաչում ՄՔԴ-ի ընդունած ձերբակալության կարգադրությունները: Լիբիայի արդարադատության նախարար Մոհամմադ Կամուդին միջազգային դատարանն անվանել է «Արեւմուտքի գործիք երրորդ աշխարհի առաջնորդների հետապնդման համար»:**

**«Հեղափոխության առաջնորդը եւ նրա որդին որեւէ պաշտոն չեն զբաղեցնում Լիբիայի կառավարությունում, ուստի կապ չունեն ՄՔԴ-ի առաջ քաշած պահանջների հետ», ավելացրել է Կամուդին:**

**Լիբիացի ապստամբները ողջունել են Քադդաֆիին ձերբակալելու որոշումը: Բենգազիում գործող Անցումային ազգային խորհրդի մամլո քարտուղար Ջալալ ալ Գալալը հայտարարել է, թե ընդդիմադիրներն այսուհետեւ չեն բանակցի Քադդաֆիի հետ, քանի որ մտադիր չեն երկխոսել «պատերազմական հանցագործի» հետ:**

**Նա նաեւ մերժել է Լիբիայից Քադդաֆֆի փախուստի հնարավորությունը: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Մոսկվայում ՄՔԴ-ի դատավճիռն առանձնակի խանդավառություն չի առաջացրել: «Այդ վճիռը Քադդաֆիին չի ստիպի հրաժարվել իշխանությունից», հայտարարել է Պետդումայի միջազգային կոմիտեի ղեկավար Կոնստանտին Կոսաչեւը:**

**Իր հերթին Պետդումայի միջազգային գործերի կոմիտեի առաջին փոխնախագահ Լեոնիդ Սլուցկին հայտարարել է, որ ՄՔԴ-ի վճիռը «ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների միակողմանի դիրքորոշման հարթության վրա է»:**

**«Միջազգային ընկերակցությանը միաբեւեռայնության ներարկում է արվում, երբ մեկ երկրի դիրքորոշումը նույնությամբ կրկնվում է միջազգային կազմակերպություններում եւ դատարաններում: Մենք նման իրավիճակ տեսել ենք Իրաքում, Կոսովոյում, Աֆղանստանում: Ներկայումս դա տեղի է ունենում Լիբիայի պարագայում», հայտարարել է պատգամավոր Սլուցկին:**

**Մի շարք երկրներում այն կարծիքին են, որ Քադդաֆիին ձերբակալելու կարգադրությունը չի նպաստի Լիբիայում քաղաքացիական պատերազմի դադարեցմանը: Այսպես, Հարավաֆրիկյան Հանրապետության նախագահի մամլո քարտուղարը SABC ռադիոկայանին տված հարցազրույցում հայտարարել է, որ նախագահ Ջեյկոբ Զուման անչափ հիասթափված է իրադարձությունների զարգացումից, նկատի ունենալով ճգնաժամի կարգավորման նպատակով Աֆրիկյան միության ձեռնարկած բոլոր ջանքերը:**

Պ. Ք.

# Նախկին նահանգապետը մեղավոր ճանաչվեց Սենատում Օբամայի տեղը վաճառելու փորձի համար




**ԱՄՆ-ում երդվյալները Իլինոյսի նախկին նահանգապետ Ռոդ Բլագոեւիչին մեղավոր են ճանաչել Սենատում Բարաք Օբամայի տեղը վաճառել փորձելու, ինչպես նաեւ խարդախության եւ դրամաշորթության մեջ, հաղորդում է CNN հեռուստաալիքը:**

**Ինն օր խորհրդակցելուց հետո երդվյալների ժյուրին քաղաքական գործչի հանցանքն ապացուցված է համարել մեղադրանքի 20 կետերից 17-ի դեպքում: Տեսականորեն Բլագոեւիչին սպառնում է 300 տարվա բանտարկություն, սակայն փորձագետների կարծիքը վկայակոչող Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ ի վերջո նա կարող է դատապարտվել 10 տարվա ազատազրկման:**

**Ռոդ Բլագոեւիչը ձերբակալվեց 2008-ին: Մեղադրանքի հիմնական կետը նախագահական ընտրություններից հետո Իլինոյսի սենատորի թափուր մնացած տեղը վաճառելու փորձն էր: Բացի դրանից, Բլագոեւիչին մեղադրում էին ահաբեկման, դրամաշորթության եւ խարդախությանը միտված գործարքի մեջ:**

**Նրա գործով առաջին լսումները սկսվեցին 2010-ի հունիսին եւ ավարտվեցին երկու ամիս անց: Այն ժամանակ նախկին նահանգապետը մեղավոր ճանաչվեց միայն ՀԴԲ աշխատակիցներին կեղծ ցուցմունքներ տված լինելու մեջ:**

**Բլագոեւիչը Իլինոյսի նահանգապետ դարձավ 2002-ին: Նա պաշտոնանկ արվեց 2009-ին՝ արդեն ձերբակալությունից հետո:**

# Լոնդոն-2012-ի առաջին ուղեգիրը Նորայր Բախտամյանին



40-ամյա անվանի հրաձիգ Նորայր Բախտամյանը Հայաստանի մարզիկներից առաջինը 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգիր նվաճեց: Մյունխենում կայացած գնդակային հրաձգության աշխարհի գավաթի խաղարկության 4-րդ փուլում 10 մետր օդամղիչ ատրճանակի մրցումներում խոցելով 681,8 նիշ, Բախտամյանը 138 մասնակիցների մեջ գրավել էր 7-րդ տեղը: Սակայն դա էլ բավական էր օլիմպիական ուղեգիր նվաճելու համար, քանի որ առաջին վեցյակում տեղ զբաղեցրած հրաձիգները Լոնդոնում հանդես գալու իրավունք արդեն ունեին: Հաշվի առնելով դա, հրաձգության միջազգային ֆեդերացիան հայ մարզիկին օլիմպիական ուղեգիր շնորհեց:

Նորայր Բախտամյանը 2004-ի Աթենքի օլիմպիադայում 50 մետր օդամղիչ ատրճանակի մրցումներում գրավել էր 4-րդ տեղը, իսկ 10 մետր օդամղիչ ատրճանակի մրցումներում 7-րդ արդյունքն էր ցույց տվել:

Օգոստոսի 1-14-ը Բելգրադում կայանալիք հրաձգության Եվրոպայի առաջնությունում Բախտամյանը պետք է փորձի 2-րդ ուղեգիրը նվաճել 50 մետր օդամղիչ ատրճանակի մրցումներում: Հիշեցնենք, որ Բախտամյանը բազմիցս մրցանակակիր է դարձել Եվրոպայի առաջնություններում եւ աշխարհի գավաթի խաղարկություններում: Բելգրադում օլիմպիական ուղեգիր նվաճելու հնարավորությունը կփորձի օգտագործել նաեւ մեր ստենդային հրաձգության առաջատար, 42-ամյա Երջանիկ Ավետիսյանը, որը տեւական ընդմիջումից հետո կրկին հանդես է գալիս Հայաստանի դրոշի ներքո:

# Հայաստանն ու Ադրբեջանը միեւնույն խմբում չեն հայտնվի

**ՈՒԵՖԱ-ն դիմել է ՖԻՖԱ-ին, որպեսզի հուլիսի 30-ին կայանալիք 2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի վիճակահանության ժամանակ Հայաստանի եւ Ադրբեջանի, ինչպես նաեւ Վրաստանի ու Ռուսաստանի հավաքականները միեւնույն խմբում չհայտնվեն: Այս խնդրանքը պայմանավորված է նշված երկրների միջեւ առկա կոնֆլիկտով:**

**Ինչպես հայտնի է, Հայաստանի հավաքականը վիճակահանության ժամանակ եվրոպական 4-րդ զամբյուղում է, իսկ Ադրբեջանը ընդգրկված է 5-րդ զամբյուղում: Այնպես որ բացառված չէ, որ վիճակահանությամբ երկու երկրների հավաքականները հայտնվեն միեւնույն խմբում: Եթե դա տեղի ունենա, ապա վիճակահանության արդյունքը չեղյալ կհամարվի ու մրցակիցներից մեկը կընդգրկվի այլ խմբում: Նույնը վերաբերում է նաեւ Ռուսաստանի (2-րդ զամբյուղ) եւ Վրաստանի (4-րդ) հավաքականներին:**

**Հիշեցնենք, որ Եվրոպայի 2008-ի առաջնության ընտրական մրցաշարում Հայաստանի եւ Ադրբեջանի հավաքականները վիճակահանությամբ ընդգրկվել էին միեւնույն խմբում: Բավական ժամանակ քննարկվում էր, թե հանդիպումները որտեղ են կայանալու: Հայկական կողմը պատրաստ էր անվտանգության երաշխիքներ տրամադրել ադրբեջանցիներին ու հյուրընկալել մրցակցին Երեւանում: Իսկ ահա ադրբեջանական կողմը նման երաշխիքներ չէր տվել: Ի վերջո, ՈՒԵՖԱ-ն որոշեց չանցկացնել Հայաստան-Ադրբեջան մրցախաղերը: Մարզական առումով Հայաստանի հավաքականը տուժեց, քանի որ հնարավորություն ուներ ավելի բարձր տեղ զբաղեցնելու ընտրական խմբում:**

**Խաղերը չեղյալ հայտարարելուց հետո ՈՒԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինին երեւանյան այցելության ժամանակ հայտարարեց, որ այսուհետ այնպես կարվի, որպեսզի այլեւս Հայաստանն ու Ադրբեջանը միեւնույն խմբում չընդգրկվեն:**

# Հեյը պատրաստ է ոչնչացնել Կլիչկոյին

## *Կլիչկոն մտադիր է զբաղվել Հեյի բուժմամբ*



Հաշված օրեր են մնացել պրոֆեսիոնալ բռնցքամարտում մեծ հետաքրքրություն առաջացնող Վլադիմիր Կլիչկո-Դեւիդ Հեյ մենամարտին, որը կկայանա հուլիսի 2-ին Համբուրգում: Այդ մենամարտում կվիճարկվեն գերծանրքաշային կարգում WBA-ի, IBF-ի եւ WBO-ի վարկածներով չեմպիոնական գոտիները: Առաջինը պատկանում է Դեւիդ Հեյին, մյուս երկուսը՝ Վլադիմիր Կլիչկոյին, որը նաեւ աշխարհի չեմպիոն է IBO-ի եւ IBC-ի վարկածներով:

Մենամարտից առաջ մրցակիցները վերջին անգամ հանդիպեցին մամուլի ասուլիսում: Առաջինը խոսեց Դեւիդ Հեյը: «Շատերը կարծում էին, թե կհրաժարվեմ մենամարտից որեւէ պատճառաբանությամբ: Սակայն ես այստեղ եմ ու գերազանց մարզավիճակում եմ: Պատրաստ եմ ոչնչացնելու Կլիչկոյին: Նրա մարզչի կարծիքով, Կլիչկոն ֆիզիկական եւ հոգեբանական հոյակապ մարզավիճակում է, հիանալի է նախապատրաստվել մենամարտին: Ես նրա համար նորություն եմ պատրաստել: Հաճելի կլինի դիտել, թե ինչպես ռոբոտ Կլիչկոյի մեխանիզմում խափանում տեղի կունենա: Ես արագաշարժ եմ ու տիրապետում եմ հզոր հարվածների: Մարզչիս հետ իդեալական ծրագիր եմ մշակել Կլիչկոյի հետ մենամարտելու եւ նրան հաղթելու համար: Հուլիսի 2-ին Կլիչկոյի թիմը հիասթափություն կապրի: Վերջին տարիներին նա շատ է հաղթել, ժամանակն է եւս մեկ ծանր պարտության մատնելու Վլադիմիրին:

Մինչ ամբիոնին մոտենալը Կլիչկոն ձեռքը մեկնեց Հեյին, սակայն վերջինս կրկին հրաժարվեց սեղմելու մրցակցի ձեռքը: Կլիչկոն այդ առիթով նշեց, որ իր ձեռքը սեղմել են Ուկրաինայի եւ ԱՄՆ-ի նախագահները, բրազիլացիները, գերմանացիները, Մոհամեդ Ալին, Մաքս Շմելինգը, Ջորջ Ֆորմանը, Ջո Ֆրեյզերը, Լարի Հոլմսը, Մայք Թայսոնը, Լենոքս Լյուիսը: Ի պատասխան Հեյը հայտարարեց, որ ձեռքը կսեղմի, երբ այցելի հիվանդանոց Կլիչկոյին տեսակցության:

«Ես եւս ուրախ եմ, որ վերջապես մեր հանդիպումը կայանալու է: Տեսնում եմ, որ հիանալի մարզավիճակում ես, շատ վստահ ես ուժերիդ: Իրականում Հեյն այնքան էլ վատ մարդ չէ, ինչպես նրան համարում են: Հարգանքով եմ վերաբերվում քեզ որպես չեմպիոնի, բայց ոչ որպես մարդու: Միայն ցանկանում եմ քեզ ասել, որ ինձ Վլադիմիր Կլիչկո են անվանում, նաեւ դոկտոր Կլիչկո: Եվ շաբաթ օրը կլինեմ քո թերապեւտը: Պատրաստվում եմ զբաղվել քո բուժմամբ: Իմ հուժկու հարվածներով քեզ երազներից իրականություն կվերադարձնեմ: Եվ դա քո ապագայի համար օգտակար կլինի: Դու ավելի լավ մարդ կդառնաս, քեզ ավելի նորմալ կպահես: Քեզ ռինգում հաջողություն եմ մաղթում: Մենք կհանդիպենք հուլիսի 2-ին», նշեց Վլադիմիր Կլիչկոն:

# Պետրոսյանն առաջատարների խմբում է

Ռումինիայի Էֆորիա քաղաքում ավարտին է մոտենում շախմատի միջազգային մրցաշարը: Նախավերջին՝ 8-րդ տուրում Սուրեն Պետրոսյանը հաղթեց Գեորգե Յիրովեանուին ու վաստակեց 5 միավոր: Պետրոսյանը 11-րդ տեղում է:

Աղյուսակը 6-ական միավորով գլխավորում են բելառուս Ալեքսեյ Ֆյոդորովն ու ռումինացի Մարիուս Մանոլաչեն: Ֆյոդորովը հաշտություն կնքեց Սերգեյ Տիվյակովի հետ, իսկ Մանոլաչեն հաղթեց Լուկիան-Կոստին Միրոնին: 5 շախմատիստներ՝ Սերգեյ Տիվյակովը, Վադիմ Մալախատկոն, Ալեքսեյ Գավրիլովը, Բելա Բադեան եւ Իզաբելա Պեպտանը վաստակել են 5,5-ական միավոր:

Ավարտական տուրում Սուրեն Պետրոսյանը կխաղա Ստեֆան Տելեայի հետ: Ֆյոդորովի մրցակիցը կլինի Պեպտանը, իսկ Մանոլաչեն կմրցի Բելա Բադեայի հետ:



# Էլմիրա Անտոնյանը վետերանների Եվրոպայի փոխչեմպիոնուհի

**Չեխիայի Լիբերեց քաղաքում ավարտվեց սեղանի թենիսի վետերանների Եվրոպայի առաջնությունը, որում Հայաստանը ներկայացրին մեր անվանի թենիսիստուհիները, աշխարհի, Եվրոպայի եւ ԽՍՀՄ առաջնությունների բազմակի մրցանակակիրներ Էլմիրա Անտոնյանն ու Գոհար Խանզրատյանը, որոնք իրենց վարպետությունը դրսեւորեցին 50-59 տարեկանների մրցավեճում:**

**Գերազանց հանդես եկավ Էլմիրա Անտոնյանը: Մենախաղերում առավելության հասնելով բոլոր մրցակիցների նկատմամբ, Էլմիրան մտավ եզրափակիչ: Այստեղ հայ թենիսիստուհու մրցակցուհին մեկ այլ հանրահայտ մարզուհի էր՝ Եվրոպայի նախկին չեմպիոնուհի, ներկայումս Սլովակիան ներկայացնող Վալենտինա Պոպովան: Համառ մրցապայքարում Էլմիրան զիջեց 2-3 հաշվով եւ արժանացավ վետերանների Եվրոպայի փոխչեմպիոնուհու տիտղոսին:**

**Զուգախաղում ընկերակցելով Լարիսա Անդրեեւային, Էլմիրան կրկին հաջող հանդես եկավ եւ միայն եզրափակիչում պարտվեց Վալենտինա Պոպովա-Լարիսա Ֆարինա երկյակին: Էլմիրա Անտոնյանը հաջող մրցելույթներով նվեր մատուցեց իր 55-ամյա հոբելյանին, որը նա նշեց երեկ:**

# Գրիգորյանն ու Փամբուկչյանը շարունակեցին հաղթարշավը

**Ալբենայի շախմատի մրցաշարի 3-րդ տուրն էլ հաղթական էր 2010-ի Հայաստանի չեմպիոն Ավետիք Գրիգորյանի եւ բուլղարահայ միջազգային վարպետ Վալենտին Փամբուկչյանի համար: Գրիգորյանը սեւերով պարտության մատնեց Կիրիլ Բադեւին, իսկ Փամբուկչյանը հաղթեց Կլաուդիա Կուլոնին: Մրցաշարի մասնակից հայ 3-րդ շախմատիստը՝ Տիգրան Սիմոնյանն առաջին կես միավորը կորցրեց Պավել Յարազի հետ մրցավեճում:**

**3 տուրից հետո Ավետիք Գրիգորյանն ու Վալենտին Փամբուկչյանը 100 տոկոսանոց արդյունքով 16 շախմատիստների հետ գլխավորում են աղյուսակը: Տիգրան Սիմոնյանը 2,5 միավորով առաջատարներին հետապնդողների թվում է:**

**4-րդ տուրում Գրիգորյանը սպիտակներով կմրցի Կրում Գեորգիեւի հետ: Վալենտին Փամբուկչյանն ու Տիգրան Սիմոնյանը կխաղան սեւ խաղաքարերով համապատասխանաբար Պոնտուս Կառլսոնի եւ Աթանաս Կոլեւի հետ:**

# Լիլիթ Մկրտչյանը բավարարվեց 3-րդ տեղով



**Հունգարիայում ավարտվեց Դյորդ Մարքսի 9-րդ հուշամրցաշարը: Կանանց մրցապայքարում գլխավոր մրցանակը վիճարկեցին 6 շախմատիստուհիներ, որոնց թվում էր Լիլիթ Մկրտչյանը: Ավարտական տուրում հաղթելով Էսթեր Դուդասին, Մկրտչյանը վաստակեց 6 միավոր ու գրավեց 3-րդ տեղը՝ լրացուցիչ գործակիցներով զիջելով նույնպիսի ցուցանիշ ունեցող Իլդիկո Մադլին: Վերջինս հաշտություն կնքեց Աննա Ռուդոլֆի հետ:**

**Իսկ մրցաշարի հաղթող ճանաչվեց Ալինա Կաշլինսկայան, որը սեւերով պարտության մատնեց Աննա Շարեւիչին: Կաշլինսկայան վաստակեց 6,5 միավոր: 5 միավորով 4-րդ տեղը զբաղեցրեց Աննա Ռուդոլֆը, որին հաջորդեցին Էսթեր Դուդասը (3,5 միավոր) եւ աղյուսակը եզրափակած Աննա Շարեւիչը (3):**

**Նշենք, որ Լիլիթ Մկրտչյանն իր վարկանիշով (2468) գերազանցում էր մրցակցուհիներին: 2-րդ ցուցանիշն ուներ Իլդիկո Մադլը (2405), իսկ մրցաշարի հաղթող Ալինա Կաշլինսկայայի վարկանիշը 2360 էր:**

**Մկրտչյանը մրցաշարում տոնեց 4 հաղթանակ, նույնքան պարտիա ավարտեց ոչ-ոքի, կրեց 2 պարտություն Ալինա Կաշլինսկայայից եւ Իլդիկո Մադլից: Հենց այս անհաջողությունների պատճառով էլ Լիլիթը զրկվեց 1-ին տեղը գրավելու հնարավորությունից:**

# Քառորդ եզրափակիչի մասնակիցները հայտնի են

**Թենիսի Ուիմբլդոնի մրցաշարում հայտնի են քառորդ եզրափակիչի բոլոր մասնակիցները: Տղամարդկանց մրցաշարում իրենց հաղթարշավն են շարունակում հաղթողի գլխավոր հավակնորդներ Ռաֆայել Նադալը, Ռոջեր Ֆեդերերն ու Նովակ Ջոկովիչը:**

**Նադալը բավականին համառ մրցապայքարում, 4 խաղափուլում կարողացավ հաղթահարել արգենտինացի Խուան Մարտին դել Պոտրոյի դիմադրությունը (7-6, 3-6, 7-6, 6-4): Ընդ որում առաջին խաղափուլում Նադալը վնասեց ոտքը: Նրա հետագա մասնակցության հարցը կորոշի ռենտգեն հետազոտությունը: Քառորդ եզրափակիչում Նադալը պետք է մրցի ամերիկացի Մարդի Ֆիշի հետ: Վերջինս պարտության մատնեց չեխ Թոմաշ Բերդիխին (7-6, 6-4, 6-4):**

**Ռոջեր Ֆեդերերին էլ Միխայիլ Յուժնուն հաղթելու համար 4 խաղափուլ անհրաժեշտ եղավ: Ընդ որում առաջին խաղափուլում թայ բրեյքում հաղթեց ռուսաստանցի թենիսիստը (7-6): Սակայն մյուս 3 խաղափուլերն ավարտվեցին Ֆեդերերի հաղթանակով միեւնույն 6-3 հաշվով: Հաջորդ փուլում Ֆեդերերը կմրցի ֆրանսիացի Ժո-Ուիլֆրիդ Տսոնգայի հետ, որը պարտության մատնեց իսպանացի Դավիթ Ֆեռերին (6-3, 6-4, 7-6):**

**Իսկ ահա Նովակ Ջոկովիչին 3 խաղափուլն էլ բավական էր ֆրանսիացի Միքայել Լլոդրային հաղթելու համար (6-3, 6-3, 6-3): Նա հաջորդ փուլում կհանդիպի ավստրալացի Բեռնարդ Տոմիչի հետ: Վերջինս առավելության հասավ Քսավիե Մալիսի նկատմամբ (6-1, 7-5, 6-4):**

**Քառորդ եզրափակիչի 4-րդ զույգը կազմել են Էնդի Մարեյն ու Ֆելիսիանո Լոպեսը: Մարեյը հաղթեց Ռիշար Գասկեին (7-6, 6-3, 6-2), Լոպեսն առավելության հասավ Լուկաշ Կուբոյի նկատմամբ (3-6, 6-7, 7-6, 7-5, 7-5):**

**Կանանց մրցապայքարում Մարիա Շարապովան հաղթելով չինացի Շուայ Պենին (6-4, 6-2), մտավ քառորդ եզրափակիչ, որտեղ կմրցի Սլովակիայի ներկայացուցիչ Դոմինիկա Ցիբուլկովայի հետ: Վերջինս պայքարից դուրս մղեց դանիացի Կարոլին Վոզնյացկուն (1-6, 7-6, 7-5):**

**Անհաջողության մատնվեցին նաեւ Ուիլյամս քույրերը: Սերենան զիջեց ֆրանսիացի Մարիոն Բարտոլիին (3-6, 6-7), Վինուսը պարտվեց բուլղարացի Ցվետանա Պիրոնկովային (2-6, 3-6):**

**Քառորդ եզրափակիչի մյուս զույգերը կազմել են Սաբինա Լիսիցկին եւ Մարիոն Բարտոլին, Տամիրա Պասեկն ու Վիկտորիա Ազարենկոն, Ցվետանա Պիրոնկովան եւ Պետրա Կվիտովան:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՄԱՀԱԶԴ

Հայաստանի Դեմոկրատական կուսակցության Հանրապետական խորհուրդը խորապես վշտացած՝ ցավակցում է ՀԴԿ նախագահության անդամ Ռուբեն Բախշյանին, սիրելի հոր՝

**Քաջիկ Կոստանդի Բախշյանի**

անժամանակ մահվան առիթով:

Հոգեհանգստի արարողությունը տեղի կունենա հունիսի 29-ին, ժամը 18:00-ին: Հասցեն՝ Վարդարշյան 1:

# ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքի վարչական տարածքում Վարդենիկ գետի վտակների վրա «Վարդենիկ-2» ՓՀԷԿ-ի կառուցման ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. հուլիսի 7-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

***ՀՀ բնապահպանության նախարարություն***

Ն. Զարյան 3-րդ շենքի բնակիչները շնորհակալություն են հայտնում Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Էդուարդ Մուշեղյանին: Արձագանքելով բնակիչների խնդրանքին՝ Է. Մուշեղյանի նախաձեռնությամբ բարեկարգվել է, մասնավորապես, ասֆալտապատվել է Ն. Զարյան 3-րդ շենքի բակը: Աշխատանքի արդյունքում բակի տարածքում երթեւեկությունը դարձել է առավել ապահով, իսկ երեխաների համար խաղալն՝ առավել անվտանգ:

# Հայտարարություն

Սույն թվականի հուլիսի 6-ին, ժամը 12:00–ին ՀՀ ք. Երևան Արին Բերդի 3/6 տեխի կունենա «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» ՍՊԸ-ի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

# Վաճառվում է
## LADA Priora

մակնիշի ավտոմեքենա, 2008 թվականի արտադրության, 2010 թվականի վաճառք: Գտնվում է գործարանային երաշխիքի մեջ: Վազքը՝ 13 000 կմ, գույնը՝ սեւ մետալիկ, հեչբեք: Ունի՝ կոնդիցիոներ, անվտանգության բարձիկ, բորտ համակարգիչ, հայելիների եւ ապակիների (մգեցված) էլեկտրոնային կարգավորում, բարձրակարգ աուդիո համակարգ՝ Bluetooth-ով եւ iPhone/iPod միացումով: Տրվում են նաեւ 4 ձմեռային անվադողեր՝ համարյա նոր վիճակում:

**Հեռ.՝ (094) 401-337**

# Վաճառվում է
## Daewoo Matiz Best

մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 3 600 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր., գերազանց վիճակ է:

**Հեռ.՝ (094) 577-578**

# Վաճառվում է
## Volkswagen Jetta

**մակնիշի ավտոմեքենա, արծաթափայլ, արտ. 2000 թ., վաճ. 2001 թ., շարժիչը 2 լ., փոխանց. տուփը ավտոմատ, սրահը կաշվեպատ, դիմացի նստատեղերը տաքացվող, հայելիները, լյուկը եւ ապակիները (մգեցված) էլեկտր., ունի կոնդիցիոներ: Գերազանց վիճակ: 095 02 66 19:**

---

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

*Ձեւ N 1*

**31 դեկտեմբեր, 2010 թ.**

ծածկագիր

| | | |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | ՀՀ-ում «Լեդա Քեմփուս» ՍՊԸ մասնաճյուղ | |
| Փաստացի գործունեությունը | Վարձակալություն | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 28606005124 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 02569948 |
| Չափի միավորը | | Մեկ հազար ՀՀ դրամ |
| Գտնվելու վայրը | ք. Երեւան, Տերյան 105/1 | հեռախոս՝ 51-43-39 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ք. Երեւան, Տերյան 105/1 | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 010 | 1,222,754 | 1,157,571 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 802 | 701 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 070 | 3,142 | 2,840 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 1,226,698 | 1,161,112 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 1,415 | 1,570 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 1,130 | 620 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 13,243 | 13,107 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | 1,456 | 1,308 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 15,037 | 6,379 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 210 | 923 | 1,449 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 33,204 | 40,405 |
| Հաշվեկշիռ | 230 | 1,259,902 | 1,201,517 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 290 | 808,050 | 670,596 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 808,050 | 670,596 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | 227,614 | 297,170 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 320 | 13,346 | 21,229 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 240,960 | 318,399 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | 27,921 | 47,115 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 380 | 12,525 | 15,375 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 5,529 | 10,850 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 86,149 | 130,420 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 68,013 | 6,087 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 689 | 615 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 10,066 | 2,060 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 210,892 | 212,522 |
| Հաշվեկշիռ | 500 | 1,259,902 | 1,201,517 |

***Գլխավոր տնօրեն՝ Հ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ***

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Ձեւ N 2*

**01.01.2010-31.12.2010**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 388,587 | 438,834 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (176,042) | (206,344) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 212,545 | 232,490 |
| Իրացման ծախսեր | 040 | (305) | (71) |
| Վարչական ծախսեր | 050 | (46,540) | (39,236) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 165,700 | 193,183 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | 6,830 | 1,854 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | (5,240) | ((9,593) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 167,290 | 185,444 |
| Ֆինանսական ծախսեր | 100 | (36,878) | (36,780) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝ | 130 | 224,468 | 15,279 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 354,880 | 163,943 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 354,880 | 163,943 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (83,945) | (31,035) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 270,935 | 132,908 |

***Գլխավոր տնօրեն՝ Հ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ***

## Անկախ աուդիտորի եզրակացություն
### ՀՀ-ում «Լեդա Քեմփուս» ՍՊԸ մասնաճյուղի մասնակցին

Մեր կողմից աուդիտի է ենթարկվել ՀՀ-ում «Լեդա Քեմփուս» ՍՊ ընկերության մասնաճյուղի կից ներկայացված 2010 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները եւ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

**Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը**

Նշված ֆինանսական հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան կազմելու եւ արժանահավատ ներկայացնելու համար պատասխանատվություն է կրում ընկերության տնօրենությունը: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում եւ պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ինչպես նաեւ տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

**Աուդիտորի պատասխանատվությունը եւ աշխատանքների բնույթի նկարագիրը**

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրինք Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոններ, աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են աուդիտորի դատողության վրա հիմնված ընթացակարգերի իրականացում, որոնք ուղղված են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության եւ բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանը: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով, ՀՀ-ում «Լեդա Քեմփուս» ՍՊ ընկերության մասնաճյուղի կողմից կազմված տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի, ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկերը եւ կազմված են ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համահունչ:

***«Լեգալ-Աուդիտ» ՍՊԸ տնօրեն եւ աուդիտոր***
***Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ***

---

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

*Ձեւ N 1*

**31 դեկտեմբերի 2010 թ.**

ծածկագիր

| | | |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | **«Խ.Վ.Դ.» ՍՊԸ** | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | առեւտուր, արտադրություն | 39229227 |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 290.110.03471 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 02240771 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ք. Երեւան, Կարմիր բլուր 14 | հեռախոսը 010 46 58 63 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ք. Երեւան, Արարատյան 90/9ա | հեռախոսը 010 46 58 63 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 1,075 | 880 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 060 | 52 | |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 1,127 | 880 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 1,748 | 2,711 |
| Արագամաշ առարկաներ | 110 | | 888 |
| Արտադրանք | 130 | 30 | 30 |
| Ապրանքներ | 140 | 180,551 | 121,779 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 114,489 | 85,474 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 8,833 | 18,151 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 77,456 | 44,953 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 200 | 41,503 | 328,955 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 210 | | 43 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 424,610 | 602,984 |
| Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ | 230 | 425,737 | 603,864 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 270 | (1,078) | 116,964 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | (1,028) | 117,014 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 370 | 70,000 | 60,505 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 347,776 | 421,453 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 7,160 | 2,967 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 185 | 32 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 160 | 17 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 1,484 | 1,876 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին) | 440 | | |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 426,765 | 486,850 |
| Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ | 500 | 425,737 | 603,864 |

***Ղեկավար՝ Ա. Մանուկյան***
***Որակավորված հաշվապահ՝ Ստեփանյան***
***վկայական թիվ 0498, տրվ. 07.10.2010 թ.***

***Տնօրեն՝***
***Ա. Չաթինյան***

***Աուդիտոր՝***
***Ն. Աֆրիկյան***

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Ձեւ N 2*

**2010 թվականի համար**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 871,820 | 1,251,819 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (752,277) | (1,011,754) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 119,543 | 240,065 |
| Իրացման ծախսեր | 040 | (10,118) | (10,095) |
| Վարչական ծախսեր | 050 | (62,201) | (78,486) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 47,224 | 151,484 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | | 700 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | (44,095) | (2,231) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 3,129 | 149,953 |
| Ֆինանսական ծախսեր | 100 | | (11,635) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝ | 130 | | 7,544 |
| | 131 | | |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 3,129 | 145,862 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 3,129 | 145,862 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (9,632) | (27,820) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | (6,503) | 118,042 |

***Ղեկավար՝ Ա. Մանուկյան***
***Որակավորված հաշվապահ՝ Ստեփանյան***
***վկայական թիվ 0498, տրվ. 07.10.2010 թ.***

***Տնօրեն՝***
***Ա. Չաթինյան***

***Աուդիտոր՝***
***Ն. Աֆրիկյան***

## Անկախ աուդիտորի եզրակացություն
### «Խ.Վ.Դ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությանը

*Մենք աուդիտի ենք ենթարկել «Խ.Վ.Դ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետեւ՝ Ընկերություն) հաշվապահական հաշվեկշիռը առ 31-ը դեկտեմբերի 2010 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը:*

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Աուդիտն իր մեջ ներառում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք թույլ են տալիս գնահատելու հաշվետվություններում եւ այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիությունը:

Մենք աուդիտն անցկացրինք Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտներին եւ գործնական փորձին համապատասխան: Այդ ստադարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, Ընկերության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները եւ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները 31-ը դեկտեմբերի 2010 թ. դրությամբ տալիս են ճշմարիտ եւ իրական պատկեր Ընկերության ֆինանսական վիճակի մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՀՀՀՀՍ):

***«Ջի ընդ Քո. Աուդիտ» ՍՊԸ***
***Տնօրեն/աուդիտոր Ա. Չաթինյան***
***Որակավորման վկայական թիվ 168***
***Աուդիտոր Ն. Աֆրիկյան***
***Որակավորման վկայական թիվ 157***
***«28» հունիսի 2011 թ.***
***Երեւան***

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 28.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: